

Թ Ե Ռ Փ Ա Ն Ե Ս Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ղ Ը,
ՆՐԱ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»
ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԳԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
VII—VIII ԳԴ.

VII—VIII դդ. Բյուզանդական կայսրության ամենաբախտորոշ շրջաններից է, ամենաճակատագրական թե՛ ներքին և թե՛ արտաքին նկատառումներով: Այդ դարերում նրա գոյությանն էին սպառնում պարսիկները, ավարները, խազարները, սլավոնները, բուլղարները և, ամենից շատ՝ արաբները: VII—VIII դդ. կայսրության համար ծանր էին նաև աշխատավոր զանգվածների դասակարգային պայքարի բռնկումներով ու աննախադեպ ծավալմամբ: Պայքարը ծավալվել էր ոչ միայն տիրող ու շահագործվող դասակարգերի միջև, որի արտահայտություններից մեկը այդ շրջանում բռնկված ու տարածված աղանդավորական շարժումներն էին, այլև նույն իշխող դասակարգերի: VIII դ. և IX դ. առաջին կեսին այդ պայքարը ծավալվեց «պատկերապաշտների» և «պատկերամարտների» անդիջում կոիվների ու տականավրայությունների քողի տակ: Թվում է, թե այդ թոհուբոհը ավարտվելու է կայսրության խորտակմամբ:

VII—VIII դդ. բյուզանդագիտության մեջ ընդունված է որակել որպես մթին ժամանակաշրջան: Բյուզանդական կայսրության պատմության և ոչ մի շրջան սկզբնաղբյուրների տեսակետից այնքան աղքատ չէ, ինչքան հիշյալ դարերը: Դրա պատճառը նախ և առաջ այն է, որ պատկերամարտների գրչին պատկանող պատմական երկերը պատկերապաշտության լիակատար հաղթանակից հետո (842) նրանց քաղաքական հակառակորդների կողմից ոչնչացվեցին, հրապարակի վրա մընացին այդ շրջանը լուսաբանող ընդամենը երկու պատմական երկ՝ պատկերամարտների հանդեպ թշնամաբար տրամադրված Թեոփանես խոստովանողի «Ժամանակագրությունը» և Նիկեիոր պատրիարքի «Համառոտ պատմությունը»: Երկուսն էլ օգտագործել են իրենց քաղաքական հակառակորդների գրչին պատկանող և այժմ կորած երկերը, նրան-

ցից քաղած տեղեկությունները անցկացնելով իրենց հավատամքի քուրայի միջով:

Ո՞վ էր Թեոփանեսը խոստովանողը: Ի տարբերություն բյուզանդական բազում հեղինակների, որոնց վերաբերյալ կենսագրական տվյալները աղքատիկ են, սփռված իրենց աշխատությունների տարբեր էջերում, Թեոփանեսի վերաբերյալ մեր տեղեկությունները համեմատաբար առատ են: Հարցն այն է, որ լինելով իր ժամանակի աչքի ընկնող քաղաքական և եկեղեցական գործիչ, Թեոփանեսը պատկերամարտ կայսրերի կողմից հալածանքների է ենթարկվել, վախճանվել աքսորավայրում: Պատկերապաշտության հաղթանակից հետո պատկերամարտների հակառակորդների կողմից նա սրբացվեց, ստեղծվեցին եկեղեցու «սուրբ այր» Թեոփանեսի «Վարքերը»¹, որոնք և, ինչքան էլ կանխակալ տեսանկյունից գրված լինեն, հնարավորություն են տալիս գծելու նրա կենսագրությունը: Այդպիսի հնարավորություն են ընձեռում հայսմավուրքները, որտեղ մարտի 12-ի (կամ՝ 9-ի) տակ նշվում է սուրբ Թեոփանեսի հիշատակը, ինչպես և նրան նվիրված բազմաթիվ շարականներ: Նշենք այստեղ, որ Թեոփանեսը IX դ. միակ սուրբն է, որի վարքը մեծ հաճույքով ընթերցվում էր հավատացյալների շրջանում: Նրա մահից անմիջապես հետո նրա կենսագրությունը կազմել է Թեոդորոս Ստուդիտեսը՝ իր մի նամակում: Սրբի մահից երեսուն տարի անց նրա կենսագրության շարադրությանը ձեռնամուխ եղան պատրիարք Մեթոդիոսը (842—847), հագիոգրաֆ Սաբան, Վլախեռնայի տաճարի լուսարար Նիկեփորը, պրոտասեկրետ Թեոդորոսը, ապա հայտնի վարքագիր Սիմեոն Մետափրաստեսը: Պահպանվել են նաև երկու անանուն վարքագրություններ²:

Թեոփանեսը ծնվել է շուրջ 760 թվականին, հավանաբար Կոստանդնուպոլսում: Ծնողները՝ Իսահակն ու Թեոդոտեն, կենսագրի ասելով, շատ հարուստ մարդիկ էին: Հայրը զորավարի բարձր աստիճան ուներ և գլխավորում էր «էգեական ծով» անունը կրող բանակաթեմը: Կարծիք է հայտնվել, որ Թեոփանեսի ծնողները էգեական ծովի կղզիներում մեծ ձեռնարկություններ ունեին, որտեղ օգտագործվում էր ստրկական աշխատանքը³:

¹ Sb'« Theophanis Chronographia, ed. C. de Boor, vol. II, Lipsiae, 1885, p. 3—30: Թեոփանեսի վարքագրությունների մասին տե՛ս Krumbacher, Geschichte, S. 347: Դրանց լիակատար ցուցակը՝ Bibliotheca hagiographica, t. II, p. 292—294

² Лопарев, Жития святых, стр. 94—95.

³ S. Runciman, in Cambridge Economic History of Europe, vol. II, 1953 p. 106 (apud: Браунинг, Рабство, стр. 45, прим. 20).

Թեոփանեսը երեք տարեկան հասակում որբանում է հորից և դառնում նրա հսկայական հարստության ժառանգորդը: Տասներկու տարեկան հասակում նրան նշանում են, բայց ութ տարի անց, երբ պիտի տեղի ունենար հարսանյաց հանդեսը, նա հրաժարվում է և իր նշանածի հետ «մնալով աշխարհական, վանականին հատուկ կյանք էին վարում»:

Լևոն IV կայսրը (775—780) Թեոփանեսին ուղարկում է գլխավորելու Կյուզիկոսի բերդի շինարարությունը, ինչ որ նա կատարում է, շինարարության վրա ծախսելով, վարքագրի ասելով, և սեփական միջոցներին:

Թեոփանեսը 21—22 տարեկան էր, երբ վախճանվեց Լևոն IV կայսրը: Գահը ժառանգում է կայսրուհի Իրենեն և նրա որդի Կոստանդին VI-ը, որոնց օրոք պատկերամարտությունը ժամանակավորապես զիջում է իր դիրքերը: Այդ ժամանակ ահա Թեոփանեսն ու նրա նշանածը հնարավորություն են ստանում իրենց հայեցողությամբ տնօրինելու սեփական ունեցվածքը: Վարքագրի համաձայն նրանք այն բաժանում են աղքատներին, իսկ իրենց ժառանգին (οὐκείους) աղատություն շնորհում: Թեոփանեսի նշանածը հաստատվում է Իշխանաց կղզում կառուցված վանքի իրենց պատկանող կալվածքում, իսկ Թեոփանեսը դիմում է Օպսիկիոն բանակաթեմի՝ Պրոպոնտիսի ափին, Սիգրիանե լեռնային շրջանում գտնվող Պոլիխրոնիոսի վանքը, վանահայր Ստրատեգիոսին: Հիշյալ վանքը ժամանակին Ստրատեգիոսին էր նվիրել հենց Թեոփանեսը, ով, ձեռամբ հիշյալ վանահոր, վանական է օծվում: Այնուհետև վանքը բազում կալվածներով Ստրատեգիոսին թողնելով, վերջինիս ցանկությամբ անցնում է Կալոնիմոս կղզին, որտեղ, իր հայրական կալվածքում վանք է կառուցում: Իր նյութական կարիքները նա հոգում է ձեռագրերի արտագրությունից վաստակած միջոցներով: Վանահոր մահից հետո Թեոփանեսը վերադառնում է Սիգրիանե լեռը և պարտք վերցրած դրամով ոմն Գեորգից գնում է Ագրոս կոչվող գյուղը և հաստատվում այնտեղ: 780 թ. հետո Ագրոսում նա վանք է կառուցում և, որպես նրա վանահայրը, մասնակցում 787 թ. VII տիեզերական ժողովին՝ ընդդեմ պատկերամարտության:

Հիսուն տարեկան հասակում Թեոփանեսը ծանր հիվանդանում է և մնացած տարիները ապրում անկողնին գամված:

Պատկերամարտության հաղթանակը Իրենեն կայսրուհու օրոք երկար կյանք չունեցավ: Նիկեփոր I կայսեր (802—811) և հատկապես Լևոն V Հայկազնի օրոք (813—820) այն ուժգին հարված ստացավ: Սկսվեցին

պատկերապաշտների նոր հալածանքները: Պատկերամարտության բարձրացրած ալիքները չէին կարող չհասնել նաև պատկերապաշտների շրջանում մեծ հեղինակություն վայելող Թեոփանեսին: Ծանր հիվանդ Թեոփանեսին բերում են Կոստանդնուպոլիս, որտեղ Լևոն V կայսրը նրանից պահանջում է հավանություն տալ իր պատկերամարտական քաղաքականությանը, մի բան, որ մերժվում է: Կայսրը նրան երկու տարի արգելափակված է պահում Կոստանդնուպոլսի էլեթերիոսի պալատում: Այստեղից նրան 818 թ. տեղափոխում են Սամոթրակե կղզին, որտեղ 23 օր անց, 818 թ. մարտի 12-ին նա կնքում է իր մահկանացուն և թաղվում տեղում: Լևոն V-ի մահից հետո Թեոփանեսի աշակերտները իրենց ուսուցչի աճյունը բերում են Ագրոս վանքին մոտիկ գտնվող Հիերիա վայրի սբ. Պրոկոպիոսի տաճարը, իսկ հաջորդ տարի տանում ամփոփում են Ագրոսի վանքում:

Ահա համառոտ գծերով Թեոփանես խոստովանողի կենսագրությունը:

Թեոփանես խոստովանողը իր ընկեր Գեորգ Սինկելլոսի խնդրանքով գրել է 284—813 թթ. շրջանի պատմությունը, որը բնագրում վերնագրված է. „Θεοφάνους ἀμαρτωλοῦ καὶ ἡγουμένου τοῦ Ἀγροῦ καὶ ὁμολογητοῦ Χρονογραφία ἐτῶν ΦΚΗ“ («Թեոփանես խոստովանողի՝ մեղապարտ վանականի և Ագրոսի վանքի վանահոր 528 տարվա ժամանակագրություն»)⁴: Գեորգ Սինկելլոսը շուրջ 806 թ. սկսել էր կազմել մի ընդարձակ ժամանակագրություն՝ աշխարհի արարչագործությունից ընկիրդը առնող: Այն, հեղինակի 810 թ. վախճանվելու պատճառով, կիսատ էր մնացել, հասցվել էր մինչև Դիոկլետիանոս կայսեր թագավորությունը՝ 284 թ.: Գեորգ Սինկելլոսը, զգալով իր կյանքի մոտալուտ վախճանը, իր պատմագրական երկը ավարտին հասցնելու գործը վստահել է Թեոփանեսին: Այսպիսով, Թեոփանեսը իր «Ժամանակագրության» վրա աշխատել է սկսած 811—815 թթ., կամ 816 թ., սկսելով այն տեղից, որտեղ վերջակետ էր դրել Գեորգ Սինկելլոսը՝ 284 թվականից և հասցրել մինչև Միքայել I կայսեր թագավորությունը (811—813): Նախ-

⁴ Թեոփանեսի ժամանակագրության մասին հատուկ տե՛ս Преображенский, Летописное повествование; Успенский, Очерки: Նորագույններից՝ Чичуров, Место „Хронографии“; Նույնի՝ К проблеме, էջ 273—217, Նույնի՝ Византийские исторические сочинения: Թեոփանեսի «Ժամանակագրության» մատենագիտությունը տե՛ս Krumbacher, Geschichte, էջ 346—347, Moravcsik, Byzantinoturcica, I, էջ 531—537, Colonna, Gli storici bizantini, I, էջ 131—134, Чичуров, Византийские исторические сочинения, էջ 21—23.

քան «ժամանակագրության» պատմական ու գիտական արժեքի մասին խոսելը, պետք է հատուկ շեշտել, որ պատկերամարտ կայսրերի կողմից դաժան հալածանքների ենթարկված Թեոփանես խոստովանողը ծայրահեղ աշառու է պատկերամարտ կայսրերի, պատկերամարտական ողջ շարժման նկատմամբ ընդհանրապես: Նրանց թագավորությունը Թեոփանեսի երկում ներկայացված է որպես Հռոմեական կայսրության (այսինքն՝ Բյուզանդական կայսրության) ամենամոռայլ էջը, երբ այդ կայսրերի դեմ էին հանդես գալիս ոչ միայն պետության արտաքին թշնամիները, այլև անգամ բնության տարերքը⁵: Նույնիսկ Լևոն III կայսեր՝ արարների դեմ 717, 725 և 739 թթ. տարած փայլուն հաղթանակները, (որոնց մասին վկայում են և արաբ հեղինակները), Թեոփանեսի համար աննշան դեպքեր են: Նույնպիսի «գնահատականի» են արժանացած և Կոստանդին V-ի՝ բուլղարների դեմ տարած փայլուն հաղթանակները:

Որո՞նք են Թեոփանես խոստովանողի օգտագործած աղբյուրները: 284 թվականից մինչև Փոկասի թագավորությունն (602—610) ընկած ժամանակաշրջանի պատմության շարադրման համար նա օգտագործել է Սոկրատի, Սոզոմենոսի և Թեոդորեոսի եկեղեցական պատմությունները, «*Εκκ. Βαροcc.*» անանուն երկը, Եվագրիոսի, Մալալասի պատմությունները, Զատկական ժամանակագրությունը, Պրոկոպիոս Կեսարացու⁶, Հովհաննես Անտիոքացու, Թեոփիլակտոս Սիմոկատատասի⁷ երկերը: Այս աղբյուրները, բացի Հովհաննես Անտիոքացու աշխատությունից, որ հատվածաբար է պահպանվել, հասել են մեզ: Սակայն Փոկասի ժամանակաշրջանից սկսած Թեոփանեսի աղբյուրները մեծամասամբ հայտնի չեն: Հերակլիոս I կայսեր շրջանի մասին (610—641) կարելի է հիշատակել գլխավորապես Գեորգ Պիսիդացու «*De expeditione Heraclii imperatoris contra Persas*» և «*Heraclias*» երկարաշունչ պոեմները⁸, իսկ ավելի ուշ շրջանի համար⁹ Գերմանոս պատրիարքի և Հովհան Դամասկացու¹⁰ գրվածքները, Գրիգոր պապի նամակը Լևոն III

⁵ Успенский, Очерки, III, стр. 425.

⁶ Տե՛ս Կիչուրով, Феофан Исповедник, էջ 62—73:

⁷ Տե՛ս Կիչուրով, Феофан—компилятор Феофилакта, էջ 203—206:

⁸ Հերակլիոսի և նրա հարստության (610—711) շրջանի պատմության շարադրման համար Թեոփանեսի օգտագործած աղբյուրների վերաբերյալ տե՛ս Proudfoot, The sources of Theophanes, p. 367—439.

⁹ Անատատասիոս կայսեր պատմության վերաբերյալ Թեոփանեսի օգտագործած աղբյուրների մասին տե՛ս Черноусов, До питання, էջ 341—345:

¹⁰ Հովհան Դամասկացու մի դրությանը Թեոփանեսը հղում է տալիս (τοῦτον ἐγχαίρεισιν λόγων τετίμηκεν ὁ ὁσιος πατήρ ἡμῶν Ἰωάννης): Տե՛ս ստորև, էջ 128:

կայսեր (717—741): Բայց, հարկավ, սրանք պատմական երկեր չեն, սրանց հիման վրա պատմություն գրել հնարավոր չէ¹¹:

Ամբողջ VIII դ. պատմության և մասնավորապես նշանավոր պատկերամարտ կայսրեր Լևոն III-ի և նրա որդի Կոստանդին V-ի (741—775) շրջանի վերաբերյալ Թեոփանեսի օգտագործած աղբյուրների մասին քիչ բան է հայտնի: Բացառված է պնդել, թե մեր հեղինակի աղբյուրներն եղել են բանավոր: Արաբների, բուլղարների դեմ կայսրության մղած պատերազմների, կայսերական ընտանիքի, պատրիարքների փոփոխման վերաբերյալ փաստերը մեր պատմիչի պատմական երկում այնքան ճշգրիտ են ու հստակ, որ նման ենթադրության համար հիմք չկա: Այսպիսով, որոշ է, որ այդ շրջանի պատմությունը Թեոփանեսի ինքնուրույն աշխատանքի արգասիքը չէ, այլ վկայությունն այն բանի, որ նրանից առաջ մեկը կամ ոմանք մշակել են այդ հարուստ փաստական նյութը, որը և Թեոփանեսի համար աղբյուր է ծառայել: Նրանցից մեկը VIII դ. վերջում ստեղծված և գիտությանը «Մեծ ժամանակագիր» (Μεγας χρονολόγος) անվան տակ հայտնի մի պատմական երկ է, մյուսը՝ 713 թ. դեպքերի շարադրանքով ավարտվող ոմն պատրիկ Տրսյանոսի գործը¹²:

Կասկածից վեր է, որ Թեոփանեսի գլխավոր աղբյուրը՝ «Մեծ ժամանակագիրը», պիտի հանդես եկած լիներ պատկերամարտ կայսրերի, հատկապես Լևոն III-ի և Կոստանդին V-ի (դրա համար նա ուներ բոլոր հիմքերը), ընդհանրապես պատկերամարտական շարժման ժամանակաշրջանի ներբողողի դերում, հանգամանք, որ պատկերապաշտության հաղթանակից հետո նրա երկի ոչնչացման պատճառ դարձավ: Բայց պատկերապաշտությունը հաղթանակեց Թեոփանեսի մահից շուրջ քառորդ դար անց: Երբ մեր պատմիչը ձեռնարկեց իր «Ժամանակագրության» շարադրանքը, իշխանության գլուխ էին կանգնած այնպիսի թունդ պատկերամարտներ, ինչպիսիք էին Նիկեփոր I-ը և Լևոն V Հայկազունը, հետևաբար պատկերամարտական ոգով գրված գործը Թեոփանեսի (ինչպես կտեսնենք ստորև՝ նաև Նիկեփոր պատրիարքի) ձեռքում եղել է¹³, այլ հարց է, թե ինչ ձևով և ինչքանով է Թեոփանեսը իր աշխատությունը մեջ ընդգրկել այն: Համեմատություն կատարելու հնարավորությունից

¹¹ Успенский, Очерки, III, стр. 435: Թեոփանեսի կողմից 780—802 թթ. պատմության շարադրման համար օգտագործված աղբյուրների մասին տե՛ս Speck, Kaiser Konstantin VI, S. 389—398.

¹² Чичуров, Византийские исторические сочинения, стр. 18—19.

¹³ Успенский, Очерки, III, стр. 421.

մենք զուրկ ենք¹⁴։ Ինչ վերաբերում է Թեոփանեսի «Ժամանակագրության» վերջին մասին, որը առավել կամ պակաս շափով Թեոփանեսի ինքնուրույն աշխատանքի արգասիքը պիտի համարել, ապա այստեղ նա իր ապրած ժամանակաշրջանի պատմությունը տալիս է որպես ականատես և ականջալուր հեղինակ։

Բայց պատկերամարտական ոգով գրված այդ ժամանակագրությունը, ինչպես և բանավոր աղբյուրները և իր՝ Թեոփանեսի, ականատեսի և ականջալուր հեղինակ լինելու հանգամանքները չեն հանդիսացել «Ժամանակագրության» միակ աղբյուրները։ Հատկապես վաղ շրջանի վերաբերյալ բացի հունարեն նշված հեղինակների գործերից, Թեոփանեսն օգտագործել է նաև ասորական աղբյուրներ, ավելի ճիշտ՝ Թեոփանեսը և ասորի հեղինակները ընդհանուր աղբյուրներ են ունեցել¹⁵։

Ինչպիսի՞ն էր Թեոփանեսի աշխատանքի ոճը, ի՞նչ կարելի է ասել համեմատելով Թեոփանեսի «Ժամանակագրության» այն մասերը, որոնց շարադրման համար օգտագործված աղբյուրները պահպանվել են և համեմատություն անելու հնարավորություն են ընձեռում։ Պետք է նշել, որ մեր հեղինակը որպես բանաբաղ աչքի է ընկնում իր աղբյուրի ճշգրտիտ վերարտադրությամբ, այն աստիճանի ճշգրտիտ, որ Թեոփանեսի օգտագործած աղբյուրների (օրինակ՝ Պրոկոպիոս Կեսարացու գործերի) հրատարակիչները Թեոփանեսի «Ժամանակագրության» տվյալներին դիմում են իբրև տարրնթերցվածքների¹⁶։ Միաժամանակ պիտի ասել, որ եթե մեր պատմիչը փաստական նյութը վերարտադրելու հարցում «անաչառ» է, նա ամենևին էլ «պասսիվ» չէ ձեռքի տակ ունեցած աղբյուրի հեղինակի հայացքների հանդեպ։ Թեոփանեսի պատմագրական մեթոդը ակտիվ է, նա ունի սեփական հայացք ու աշխարհայացք¹⁷, որը ցցուն կերպով հանդես է գալիս այս կամ այն աղբյուրից քաղած նյութը վերարտադրելու ժամանակ։ Նա հատկապես քննադատական վերաբերմունք ունի բյուզանդական կայսրերի նկատմամբ, նշանակություն չունի՝ ժամանակագրական առումով իրեն մոտ են կանգնած նրանք, թե ոչ¹⁸։

Թեոփանեսն ամենայն ճշգրտությամբ բերում է իր աղբյուրներից քաղած թվական տվյալները, բայց ինչպես ցույց են տվել ուսումնասիր-

¹⁴ Նույն տեղում, III, էջ 420, IV, էջ 236։

¹⁵ Brooks, The sources of Theophanes, էջ 578—587, Pigulevskaja, Theophanes' Chronographia, էջ 55—60, Նույնի, Хронография Феофана, էջ 152—161։

¹⁶ Чичуров, Феофан Исповедник, стр. 62.

¹⁷ Նույն տեղում, էջ 71։

¹⁸ Նույն տեղում։

րողները, հաճախ աղավաղում է հատուկ անուններն ու տեղանունները¹⁹։ Թեոփանեսը որոշ դեպքերում, առանց այդ բանը նկատելու, միևնույն աշխարհագրական վայրը տեղադրում է տարբեր տեղերում²⁰։ Դա բացատրվում է ոչ թե Թեոփանեսի աշխարհագրական գիտելիքների պակասությամբ, այլ այն հանգամանքով, որ Կոստանդնուպոլսեցի Թեոփանեսի համար աշխարհագրությունը այնքան էլ առաջնակարգ նշանակություն չունի²¹։

Ինչ վերաբերում է Թեոփիլակտոս Սիմոկատտասի գործին, ապա Թեոփանեսն իր երկում կերպարանափոխում է իր աղբյուրի հոետորական ոճը, այն դարձնում է մանրամասներով աղքատ, աչքաթող անում անտիկ Հունաստանի հեղինակներից կատարված բազմաթիվ մեջբերումները։ Բայց հակառակ այդ բոլորին, ինչպես և Պրոկոպիոս Կեսարացու դեպքում, նա վերարտադրում է իր աղբյուրը ամենայն ճշգրտությամբ։ Նա ոչ թե սոսկ կրճատում է իր աղբյուրը, այլ մշակում այն²²։

Չի կարելի խոսել Թեոփանեսի պատմական երկի մասին, առանց հատուկ կանգ առնելու հեղինակի որդեգրած ու մշակած ժամանակագրական սխտեմի վրա, քանզի այն միանգամայն տարբերվում է բյուզանդական բոլոր պատմագիրների օգտագործածից։ Նախ ասենք, որ Թեոփանեսը դեպքերը շարադրում է խստագույնս ըստ տարիների, ընդ որում տալիս է նույն դեպքի վերաբերյալ բազմաթիվ թվական տրվյալներ։ Ամենից առաջ նա չի օգտագործում աշխարհի արարչագործության ընդունված Կոստանդնուպոլսի էրան, որի համաձայն մ.թ. առաջին տարին համապատասխանում է աշխարհի արարչագործության 5508 թ., այլ ալեքսանդրյան թվականը, որի 5492 թ. համապատասխանում է մ.թ. առաջին տարուն։ Բայց Թեոփանեսը չի բավարարվել միայն այդ թվականը նշելով։ Նա միաժամանակ նշում է ինդիկտոնի տարիները²³, Քրիստոսի մարդեղության, Հռոմի, Կոստանդնուպոլսի, Անտիոքի, Երուսաղեմի, Ալեքսանդրիայի հոգևոր պետերի, բյուզանդական կայսեր, պարսից արքայի, արաբ խալիֆայի զահակալության տարեթվերը։ Չունայած այդ բոլոր մանրամասնություններին, ուսումնասիրողները Թեո-

19 Նույն տեղում, էջ 64։

20 Նույն տեղում, էջ 66։

21 Նույն տեղում, էջ 67։

22 Чичуров, Феофан—компилятор Феофилакта, стр. 203—206.

23 Ինդիկտոնի վերաբերյալ տե՛ս Կոստանդին Միքանածին, էջ 230, Հովհաննես Սկիլիցես, էջ 276։

փանեասի ժամանակագրական տվյալները ծայր աստիճան խառնաշփոթ էին համարում²⁴։ Բայց հատուկ հետազոտությունը ժխտում է այդ ծայրահեղ կարծիքները։ Մասնագետները նշում են միայն, որ Թեոփանեասի աշխարհի արարչագործության թվականը 6102-ից (մ.թ. 609/610) 6265-ը (մ.թ. 772/773), բացառյալ 6207-ից (մ.թ. 714/715) մինչև 6218-ը (մ.թ. 725/726 թ.) տարեթվերը ինդիկտիոնի տարիների համեմատությամբ մեկ տարով ետ են մնում²⁵։ Վեճեր կան այն հարցի վերաբերյալ, թե Թեոփանեասի նոր տարին երբ է սկսվում։ Ոմանք ընդունում են սեպտեմբերի 1-ը, իսկ քստ Վ. Գրյումելի այն սկսվում է մարտի 25-ին²⁶։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Բյուզանդիայի VII—VIII դդ. պատմության աղբյուրների կատարյալ սովոր պիտի ստիպեր հետագա ժամանակագիրներին իրենց աշխատություններում տվյալ շրջանը լուսաբանելու համար լայնորեն օգտագործելու Թեոփանեասի «ժամանակագրության» տվյալները։ Նրանից օգտվել է Կոստանդին Միրանաժինը հատկապես իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ։ Այդ գրքի 14-րդ գլուխը՝ «Մուհամեդի ծագումնաբանության մասին», 17-րդ գլուխը՝ «Երանելի Թեոփանեասի ժամանակագրությունից», 18-րդը՝ «Արաբների երկրորդ առաջնորդ՝ Աբուբաքր, իշխել է երեք տարի», 19-րդը՝ «Արաբների երրորդ առաջնորդ՝ Օմար», 20-րդը՝ «Արաբների չորրորդ առաջնորդ՝ Օթման», 21-րդը՝ «Թեոփանեասի ժամանակագրությունից, աշխարհի արարչագործության 6171 թ.», 22-րդը՝ «Երանելի Թեոփանեասի ժամանակագրությունից՝ նրանց (արաբների) մասին, և Մուավիայի ու նրա տոհմի մասին, ինչպես նա անցավ Իսպանիա։ Հոռմայեցիների կայսր Հուստինիանոս Քթատ», 25-րդը՝ «Սիգրիանեի սուրբ Թեոփանեասի պատմությունից» շարադրված են Թեոփանեասի «ժամանակագրության» հիման վրա։ Թեոփանեասից օգտվել են նաև Գեորգ Վալագրության» հիման վրա։ Թեոփանեասից օգտվել են նաև Գեորգ Վալականը (IX դ.), Սիմեոն Լոգոթետը (X դ.), Գեորգ Կեդրենոսը (XI դ.),

²⁴ Успенский, Очерки, III, стр. 397.

²⁵ Թեոփանեասի ժամանակագրության (խրոնոլոգիայի) մասին տե՛ս Hubert, Observations, էջ 491—505, Brooks, The Chronology, էջ 82—97, Նույնի՝ Indictions, էջ 503—504, Hodgkin, The Chronology, էջ 283—289, Martroye, Chronologie, էջ 292—295, Ostrogorsky, Die Chronologie, էջ 1—56, Նույնի՝ Histoire, էջ 117—118, Grumel, L'année, էջ 396—408, Чачуров, Византийские исторические сочинения, էջ 19, Թեոփանեասի՝ Քրիստոսի մարդեղության թվականները սխալ են։

²⁶ Grumel, L'année:

Հովհաննես Զոնարասը (XII դ.), Թեոդորոս Սկուտարիոտեսը (XIII դ.) և բազմաթիվ անանուն ժամանակագիրներ²⁷:

Թեոփանեսի պատմական երկը արժեքավորվել է դեռևս հեղինակի մոտիկ ժամանակակիցների կողմից: Բյուզանդական պատմագրական գործերի մեջ նրան առանձնահատուկ բախտ է վիճակվել: 873—875 թթ. միջև այն լատիներեն է թարգմանվել Հռոմի պապի նվիրակ Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի կողմից²⁸: Հարկավ, Անաստասիոսի ձեռքում եղել է եթե ոչ Թեոփանեսի ինքնագիրը, համենայն դեպս նրանից անմիջապես կատարված մի արտագրություն: Այս հանգամանքը հսկայական նշանակություն ունի Թեոփանեսի հունարեն բնագրի ուսումնասիրության, հաճախ սրբագրման ու լրացման տեսակետից: Անաստասիոսի թարգմանությունը, որ կրում է «Chronographia tripartita» խորագիրը (նոմասյան ժամանակագրություն) բազմաթիվ վեճեր է առաջացրել ուսումնասիրողների շրջանում: Նշենք այստեղ, որ Անաստասիոսի ինքնագիրը չի պահպանվել, մեզ հասել են ավելի ուշ շրջանի արտագրություններ և հարց է, թե ինչքանով են նրանք ճիշտ արտահայտում Անաստասիոսի գրածը: «Chronographia tripartita»-ի հնագույն արտագրությունները, որոնք ընկած են Կ. դե Բոորի հրատարակության հիմքում, հետևյալներն են. „Cassinensis 6, Palatinus 826 և Historia Miscella (գլխավորապես նրա երկրորդ կեսը՝ Vaticanus Palatinus 909): Վերջինիս մասին տիրող է այն կարծիքը, որ դա Լանդուֆոս Սագակի ձեռագիրն է, որ Անաստասիոսի թարգմանության X—XI դդ. մի գրչագրից արված արտագրություն է²⁹:

Անաստասիոսը թարգմանության սկզբում խոսք է տալիս հայտարարիմ մնալ իր բնագրին, իր կողմից որևէ բան չավելացնել (*nihil meum in hoc opere prosus insertum praenosce*) և նա խոստումը կատարում է: «Chronographia tripartita»-ի ամենարժանիքի հետադոտող Կ. դե Բոորը նրա մեջ նշում է թարգմանչի ընդամենը չորս ընդմիջարկություն, որոնք, ի դեպ, անհրաժեշտ էին բնագիրը հասկանալի դառնալու համար³⁰: Այդուհանդերձ դե Բոորը նշում է

²⁷ Տե՛ս Moravesik, Byzantinoturcica, I, S. 533.

²⁸ Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի աշխատասիրած լատիներեն թարգմանության վերջին (քննական) հրատարակությունն իրականացրել է Կարոլոս դե Բոորը: Տե՛ս Anastasii Bibliothecarii summae ac apostolicae sedis Chronographia tripartita, in Theophanis Chronographia, rec. C. de Boor, vol. II, Lipsiae, 1885, p. 31—340: Նրա մասին նույն տեղում, էջ 401—435.

²⁹ Успенский, Очерки, III, стр. 390.

³⁰ Նույն տեղում, էջ 413.

նաև, որ Թեոփանեսի հունարեն բնագրի իսկական թարգմանության մասին կարելի է խոսել միայն սկսած Հուստինոս II-ի, անգամ Մավրիկիոսի շրջանի պատմությունից միայն: Դրան նախորդող շարադրանքը, որն իրենից ներկայացնում է ծաղկաբաղություն, հաճախ՝ համառոտագրություն, դժվար թե հունարեն բնագրի քննական ուսումնասիրության համար որևէ արժեք ներկայացնի³¹: Հակառակ այդ բոլորին, դե Բոորը, թեև ամենամանրակրկիտ ձևով ուսումնասիրել է Անաստասիոսի առավելություններն ու թերությունները՝ որպես թարգմանչի, ի վերջո հրաժարվեց նրա թարգմանությունը որևէ կերպ արժեքավորելու մտքից հունարեն բնագրի ուսումնասիրության համար³²: Նա անգամ կասկած է հայտնել Անաստասիոսի հունարեն լեզվի գիտելիքների վերաբերյալ³³: Հետագա ուսումնասիրողները շրջումեցին Անաստասիոս Բիբլիոթեկարիոսի թարգմանության դե Բոորի տված գնահատականը: Ե՛վ Պրեբրաժենսկին³⁴, և՛ հատկապես, Ուսպենսկին ըստ արժանվույն գնահատեցին թարգմանության նշանակությունը հունարեն բնագրի քննության առնչությամբ: Ուսպենսկին ցույց տվեց, որ հունարեն բնագրի համեմատությամբ լատիներեն թարգմանության մեջ առկա բացթողումներն ու հավելումները թույլ են տալիս եզրակացնելու, որ դրանք Անաստասիոսի ինքնակամ խմբագրման արգասիք չեն, այլ արտացոլումը Թեոփանեսի հունարեն այն բնագրի, որ իր ձեռքի տակ է ունեցել Անաստասիոսը³⁵: Ուսպենսկին բնագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ եկել է այն եզրակացության, որ Անաստասիոսը անշափ ճշգրիտ է, նա ջանացել է բաց շփոթնելու անգամ իր համար դժվարամատչելի և լատիներենում իմաստը մթազնոդ և ոչ մի բան³⁶, որ Chronographia tripertita-ն մեզ ամենից շատ է մոտեցնում Թեոփանեսի նախնական շարադրանքին³⁷: Անաստասիոսը ոչ հազվադեպ տալիս էր հունարեն բնագրի տառացի թարգմանությունը, չփորձելով անգամ պահպանել լատիներենի շարահյուսության օրենքները: «Կարելի է վստահորեն ասել, — գրում է Ուսպենսկին, — որ Անաստասիոսը թարգմանության ենթակա բնագրի

31 Նույն տեղում, էջ 400:

32 Նույն տեղում, էջ 398:

33 Նույն տեղում, էջ 418:

34 Преображенский, Летописное повествование, էջ 50 և հտ.:

35 Успенский, Очерки, III, էջ 416: Տե՛ս նաև Липшиц-ի առաջաբանը Ուսպենսկու հիշյալ աշխատության մասին, «Византийский Временник, т. III, стр. 396.

36 Успенский, Очерки, III, էջ 419: Հմմտ. Преображенский, Летописное повествование, стр. 50.

37 Успенский, Очерки, III, էջ 419:

գրական «սրբագրման», կատարելագործման ուղղությամբ շէր էլ մտածում»³⁸:

Անաստասիոսը թարգմանել և իր «Chronographia tripertita»-ին է կցել նիկեփոր պատրիարքի պատմական երկրորդ աշխատությունը՝ «Χρονογραφικόν σύντομον»-ը, աստվածաշնչային թագավորների, պարսից, հելլենիստական շրջանի թագավորների, հռոմեական և բյուզանդական կայսրերի ցուցակը՝ մինչև 829 թ.:

Խոսել թեոփանեսի «Ժամանակագրության» մասին առանց կանգ առնելու թեոփանեսի ժամանակակից մի այլ պատմիչի երկի՝ պատրիարք նիկեփորի (806—815) «Համառոտ պատմության» վրա («Breviarium»), անհնարին է, քանզի, ինչպես կասվի ստորև, եթե չհաշվենք թեոփանեսի պատմական երկը, ապա նիկեփորի «Breviarium»-ը հանդիսանում է մեզ հասած, բյուզանդիայի VII—VIII դարերի պատմության վերաբերող միակ աղբյուրը: Ե՛վ թեոփանեսը, և՛ նիկեփորը իրենց երկերի վրա աշխատել են IX դ. 10-ական թվականներին և երկուսն էլ հենվում են այժմ կորած միևնույն աղբյուրների վրա³⁹: Այս հանգամանքը շատ կարևոր է թեոփանեսի «Ժամանակագրության» տվյալները ըստուգելու առումով: Նիկեփորի աշխատությունը հունարեն բնագրում կրում է հետևյալ խորագիրը. «Τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Νικηφόρου πατριάρχου Κωνσταντινουπόλεως Ἱστορία σύντομος ἀπὸ τῆς Μαυρικίου βασιλείας» («Սրբոյն հօրն մերոյ նիկեփորայ Կոստանդնուպոլսոյ պատրիարքի Համառոտ պատմութիւն ի թագաւորութենէն Մօրկայ») ⁴⁰: Այն ընդգրկում է 610—769 թթ. պատմությունը:

Ինչպես ասվեց, թեոփանեսն ու նիկեփորը օգտվել են միևնույն աղբյուրներից: Դրա մասին է վկայում այդ երկու հեղինակների երկերում նկատվող բազում հատվածների նույնությունը⁴¹: Տեղ-տեղ նմա-

³⁸ Նույն տեղում, էջ 417,

³⁹ Moravcsik, Byzantinoturcica, I, S. 456—457.

⁴⁰ Հունարեն բնագրի հրատարակություններն են. Nicephori, Breviarium: Քննական բնագրի հրատարակությունն իրականացրել է Կ. դե Բոորը. Nicephori, archiepiscopi Constantinopolitani opuscula historica, ed. C. de Boor, Lipsiae, 1880. Ունի ուսուերեն թարգմանություն. Лунин, Никифор: Մի քանի հատվածները հունարեն բնագրով և ուսուերեն թարգմանությամբ, ընդարձակ ծանոթագրություններով հրատարակել է Ջիշուրովը. Чичуров, Византийские исторические сочинения, էջ 151—184, Հատվածաբար թարգմանված է նաև գերմաներեն, ֆուլդաբերեն, սերբերեն, լեհերեն և հունգարերեն (տե՛ս Чичуров, նույն տեղում, էջ 149):

⁴¹ Успенский, Очерки, III, էջ 430:

նություններն այնքան են բառացի, իսկ տարբերություններն այնպիսիք, որ գիտնականներին ստիպեցին հրաժարվել ժամանակին հայտնված այն կարծիքից, թե նրանցից մեկն ու մեկը օգտվել է մյուսից⁴²: Պատկերամարտական այժմ կորած ժամանակագրությունից նիկեփորի քաղած նյութը քաղված է և Թեոփանեսի կողմից, բայց այդ երկու պատմիչներն իրենց առաջ տարբեր խնդիրներ են դրել: Թեոփանեսը գրում է ավելի ընդարձակ պատմություն, նա ուշադրություն է դարձնում նաև թյուզանդական կայսրության հարևանների վրա, այնինչ նիկեփորը որոշել է գրել սեղմ ու համառոտ մի պատմություն: Ավելի հանգամանորեն կանգ առնելով կեսն III-ի և Կոստանդին V-ի ժամանակաշրջանի վրա, նա հակառակ որ պատկանում էր պատկերապաշտների ճամբարին, օգտագործելով միևնույն աղբյուրը, պատկերամարտ կայսրերի բնութագրման հարցում ավելի զուսպ է, քան ծայրահեղության հասնող Թեոփանեսը⁴³:

Նշենք սակայն, որ առանձին դեպքերում (օրինակ բուլղար խան Տերվելի շրջանի վերաբերյալ) Թեոփանեսի և նիկեփորի աշխատությունները էապես տարբերվում են, դա վկայում է այն մասին, որ նիկեփորը ունեցել է մի այլ աղբյուր, որին անտեղյակ էր Թեոփանեսը⁴⁴: Նիկեփորի երկում հանդիպում են և բազմաթիվ տեղեկություններ, որոնք պարզապես բացակայում են Թեոփանեսի «ժամանակագրության» մեջ⁴⁵:

Ինչպես ասվեց, բացի «Breviarium»-ից, նիկեփորը գրել է նաև «Χρονογραφικὸν σύντομον», աստվածաշնչային, պարսից, հելլենիստական թագավորների, հռոմեական և բյուզանդական կայսրերի մի ցուցակ, որը լատիներեն է թարգմանել Անաստասիոս Բիբլիոթեկարիոսը⁴⁶:

Արդ, ի՞նչ արժեք է ներկայացնում Թեոփանեսի «ժամանակագրությունը» հայոց պատմության ուսումնասիրության համար: Պետք է նշել, որ VII—VIII դդ. հայոց պատմության վերաբերյալ հայկական աղբյուրների տվյալները թեև քիչ չեն, բայց անբավարար են ժամանակաշրջանի հանգամանակից պատկերը տալու համար: Այդ դարերի վերաբերյալ կարելի է հիշատակել Սեբեոսի, Ղևոնդ վարդապետի, մասամբ Մովսես Կաղանկատվացու արժեքավոր գործերը: Որոշ նշանակություն

42 Նույն տեղում, էջ 421:

43 Հմմտ. նույն տեղում, էջ 430:

44 Цанкова-Петкова, О территории, էջ 132, ծանոթ. 43:

45 Чичуров, Византийские исторические сочинения, стр. 147.

46 Միջնադարում հունարենից թարգմանվել է նաև ուսերեն և հայտնի է «Летописец вскоре» խորագրով:

ունի հունարեն թարգմանությամբ պահպանված և գիտությանը «Narratio de rebus Armeniae» խորագրով հայտնի հայ-քաղկեդոնական մի աշխատանք⁴⁷, որը, սակայն, հիմնականում եկեղեցու պատմությանն է անդրադառնում: Ավելի ուշ հեղինակներից, որոնց գործերը այս կամ այն չափով հետաքրքրություն են ներկայացնում խնդրո առարկա շրջանի պատմության ուսումնասիրության համար, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու և Վարդան Արևելցու պատմական երկերն են, որոնց՝ մեզ հետաքրքրող նյութը հիմնականում քաղված է Սեբեոսից և Ղևոնդ վարդապետից:

Թեոփանեսի «Ժամանակագրությունը» անփոխարինելի աղբյուր է ամենից առաջ սասանյանների հարստության մայրամուտի ժամանակաշրջանի բյուզանդապարսկական հարաբերությունների վերաբերյալ, հատկապես Հերակլիոս կայսեր երկարատև պատերազմների, որոնց թատերաբեմը հիմնականում Հայաստանն էր: Թեոփանեսի տվյալները հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների համադրությամբ, տալիս են VII դ. 10—20-ական թվականներին Հայաստանում տիրող իրադրության առավել կատարյալ պատկերը: Թեոփանեսի պատմական երկը որոշակի արժեք է ներկայացնում նաև արաբների կողմից Հայաստանի նվաճման, երկրում նրանց տիրապետության հաստատման, նվաճողների վարած քաղաքականության, արաբաբյուզանդական մրցակցության ոլորտում գտնվող Հայաստանի քաղաքական ու սոցիալական լիճակի վերաբերյալ առավել հանգամանավոր պատկերացում կազմելու համար: Թեոփանեսը առաջին բյուզանդական պատմիչն է, որ հիշատակում է պավլիկյան աղանդավորներին, նրանց նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականության, հայ աղանդավորների Բյուզանդիայում ստեղծած բազմամարդ գաղութների մասին:

Բայց Թեոփանեսի «Ժամանակագրության» արժեքը միայն դրանում չէ: Ի տարբերություն հայ պատմիչների, որոնք ի միջի այլոց են խոսում հայերի՝ Բյուզանդական կայսրության կյանքում խաղացած դերի վերաբերյալ, նա այդ մասին հսկայական նյութ է մատակարարում: VII դարը հայտնի է որպես Բյուզանդական կայսրության մեջ ռազմավարական արմատական վերափոխումների ժամանակաշրջան: Ստեղծվում են Փոքրասիական բանակաթեմերը, որոնք բախտորոշ դեր են խաղում արաբական վտանգի առջև երկրի պաշտպանունակությունն ուժեղացնելու ուղղությամբ: Ահա հիմնականում Թեոփանեսից ենք իմանում, որ VII դ.

47. Տե՛ս Թարթիկյան Narratio:

երկրորդ կեսին և հատկապես ամբողջ VIII դ. ընթացքում այդ բանականթեմերի ղեկավարությունը հիմնականում վստահված էր հայազգի նշանավոր գործիչների, որոնցից շատերը անհայտ են հայ պատմիչներին: Այդ գործիչներից ոմանք տիրանում են անգամ բյուզանդական կայսեր ծիրանին ու գայիսոնին⁴⁸:

Թեոփանեսի «Ժամանակագրությունը» հայոց պատմության համարունի նաև անուղղակի արժեք: Ուսումնասիրել հայոց պատմությունը (քաղաքական դրությունը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, դասակարգային պայքարը) հարևան երկրների պատմությունից անկախ հնարավոր չէ: Կայսրության ներքին կյանքում տեղի ունեցած իրադարձությունները, տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, դասակարգային պայքարը հնարավորություն են տալիս զուգահեռներ անցկացնել, ավելի խորությամբ ու հանգամանորեն հետազոտել հայոց պատմությունը: Թեոփանեսը բյուզանդական այն հեղինակներից է, որ կայսրության պատմությունը տալիս է միջազգային ֆոնի վրա:

* * *

Թեոփանեսի «Ժամանակագրությունը» պահպանվել է բազմաթիվ գրչագրերում, որոնք սակայն ոչ բոլորն են ամբողջությամբ ընդգրկում երկը: Լավագույններն են համարվում հետևյալները.

- Paris. gr. 1710 (X դ.)
- Vatic. gr. 155 (X դ.)
- Paris. gr. 1711 (XI դ.)
- Vatic. gr. 978 (XI—XII դ.)
- Vatic. gr. 154 (XII դ.)
- Paris.-Coislin. gr. 133 (XII դ.)
- Taurin. gr. 226 [B IV 4] (XV դ.)
- Vatic. Barber. gr. 553 [V 49] (XVI դ.)
- Paris. gr. 1709 (XVI դ.)
- Vatic. Palat. gr. 395 (XVI դ.)
- Monac. gr. 391 (XVI դ.)
- Vatic. gr. 979 (XVI դ.)

⁴⁸ Հայազգի այդ բարձրաստիճան գործիչների մանրամասն ցանկը տե՛ս ստորև, էջ XLVIII—L:

Vatic. Barber. gr. 233 [II 54] (XVI դ.)

Vatic. Urbinus 87 (XVII դ.)⁴⁹

Թեոփանեսի երկի քննական բնագրի հրատարակիչ Կ. դե Բոորը գտնում է, որ ամենաընտիրը Վատիկանի մատենադարանի № 154 ձեռագիրն է, որտեղ սակայն շարադրանքն ընդհատվում է Հուստինոս I-ի թագավորության ժամանակաշրջանով: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով Թեոփանեսի բնագիրը շատ չի տուժել արտագրող-խմբագրողների կողմից⁵⁰, թեև, հիմնական հետազոտողներից մեկը՝ Գ. Պ. Պրեոբրաժենսկին վճռականորեն դեմ է այդ մտքին: Նա ընդգծում է, որ Թեոփանեսի «Ժամանակագրությունը» բովանդակող և ոչ մի գրչադիր զերծ չի մնացել կողմնակի միջամտությունից⁵¹:

Թեոփանես խոստովանողի «Ժամանակագրության» հունարեն բրնագիրը առաջին անգամ հրատարակել է J. Goar-ը բյուզանդական պատմիչների փարիզյան մատենաշարում 1655 թ.: Այն վերահրատարակվել է Combefis-ի կողմից բյուզանդական հեղինակների վենետիկյան մատենաշարում՝ 1729 թ.: I. Classen-ը Թեոփանեսի երկի հունարեն բնագիրը, իսկ I. Bekker-ը Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի լատիներեն թարգմանությունը հրատարակեցին բյուզանդական հեղինակների բոննյան մատենաշարում⁵²: Migne-ի հայտնի «Հունական հայրաբանության» մեջ վերահրատարակվել է բոննյան շարքում լույս տեսած բրնագիրը⁵³: Հունարեն քննական բնագրի հրատարակությունն իրականացրել է C. de Boor-ը⁵⁴: «Ժամանակագրությունը» հատվածաբար հրատարակել է L. F. Tafel-ը⁵⁵:

⁴⁹ Moravcsik, Byzantinoturcica, I, S. 533: Ձեռագրերի մասին Կ. դե Բոորի ուսումնասիրությունը՝ *Theophanis Chronographia*, vol. II, p. 347—400:

⁵⁰ Krumbacher, Geschichte, S. 345:

⁵¹ Преображенский, Летописное повествование, стр. 32 и сл.

⁵² *Theophanis Chronographia ex recensione Ioannis Classeni*, volumen I, Bonnae, 1839. Volumen II, *Anastasi Bibliothecarii Historia Ecclesiastica*, ex recensione *Immanuelis Bekkeri*, Bonnae, 1841, p. 40—284.

⁵³ Migne, Patrologia graeca, t. 108, Paris, 1863.

⁵⁴ *Theophanis Chronographia*, rec. C. de Boor, I, Lipsiae, 1883 (վերահրատարակվել է անփոփոխ 1963 թ. Georg Olms Verlagsbuchhandlung, Hildesheim).

⁵⁵ L. F. Tafel, *Theophanis Chronographia* (Probe einer neuen kritisch-exegetischen Ausgabe), Sitzungsberichte der philos. hist. Cl. der k. Akademie der Wiss., Wien, 9 (1852), S. 21—172.

Նշենք այստեղ, որ բացի Անաստասիոսի թարգմանությունից, Թեոփանեսի «Ժամանակագրության» հունարեն բնագիրը ունի մի երկրորդ լատիներեն թարգմանություն, որն իրականացրել է J. Goar-ը: Այն բերված է հունարեն բնագրին զուգահեռ նախ բյուզանդական պատմիչների փարիզյան, ապա վենետիկյան մատենաշարում: Բոննի մատենաշարում (Corpus Bonnense Historiae Byzantinae) լույս է տեսել I. Classen-ի թարգմանությունը: Ժամանակակից եվրոպական լեզուներով այն թարգմանված է ուսերեն Օբուենսկու և Տերնովսկու կողմից⁵⁶: Այդ թարգմանության առանձին հատվածներ լույս են տեսել «Вестник Древней Истории» հանդեսում⁵⁷: Հատվածներ լույս են տեսել Գրաքիանսկու և Սկադկինի կազմած «Քրեստոմատիայում»⁵⁸, ինչպես և Բյուզանդիայի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ փատաթղթերի ժողովածուում⁵⁹, «Բյուզանդական գրականության հուշարձաններ» ժողովածուում⁶⁰ և հենց վերջերս՝ Զիշուրովի գրքում⁶¹:

Թեոփանեսի երկը հատվածաբար թարգմանվել է նաև գերմաներեն⁶²,

56 Летопись византийца Феофана в переводе с греческого В. И. Оболенского и Ф. А. Терновского. С предисловием О. М. Бодянского, Москва, 1887 (Чтения в обществе истории и древностей российских, 1884—1887).

57 А. В. Мишулин, Древние славяне в отрывках греко-римских и византийских писателей по VII в. н. э. «Вестник Древней Истории» 1941, № 1, § 3. Отрывки из византийских писателей VII—VIII вв. (Феофилакта Симокатты и Феофана).

58 Н. П. Грацианский, С. Д. Сказкин, Хрестоматия по истории средних веков, т. I, М., 1949.

59 Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951.

60 Памятники византийской литературы IV—IX веков, под редакцией Л. А. Фрейберг, М., 1968.

61 Чичуров, Византийские исторические сочинения.

62 Dieterich K., Byzantinischen Quellen zur Länder-und Völkerkunde (5.—15 Jhd), Leipzig, 1912; Bilderstreit und Arabersturm in Byzanz. Das 8. Jahrhundert (717—813) aus der Weltchronik des Theophanes übersetzt, eingeleitet und erklärt von Leopold Breyer. Verlag Styria, Graz—Wien—Köln, 1957. („Byzantinische Geschichtsschreiber“, herausgegeben von E. V. Ivanka, Bd. VI).

սերբերեն⁶³, բուլղարերեն⁶⁴, վրացերեն⁶⁵, լեհերեն⁶⁶ և հունգարերեն⁶⁷:

* * *

Հուստինիանոս I-ը իր հետևորդներին թողեց փառքի գազաթնակետին գտնվող, արտաքնապես հզոր հսկայածավալ մի կայսրություն, որը, սակայն, ներքուստ քայքայված օրգանիզմ էր: Երկարատև պատերազմները, ամբողջ երկիրն ընդգրկած ահռելի շինարարությունը կապված էր ու պայմանավորված հարկային լծի ծանրացմամբ: Գյուղատնտեսությունն անկում էր ապրում, ծանր վիճակում էին արհեստագործությունն ու առևտուրը: Հուստինոս II (565—578) և Տիբերիոս (578—582) կայսրերը չէին կարողանում կանգնեցնել կայսրության աստիճանական փլուզումը, վերացնել պետության միասնությունը քայքայող կրոնադավանաբանական վեճերը քաղկեդոնիկների և միաբնականների միջև: Մավրիկիոս կայսրը (582—602), գիտակցելով այդ բոլորը, փորձեց դրությունը կայունացնել դիմելով մի շարք բարեփոխումների: Նա որոշ միջոցների դիմեց վարչական ապարատի ապակենտրոնացման, հարկային լծի որոշ թեթևացման ուղղությամբ, բայց շոշափելի արդյունքների չբացահայտեց: Դժգոհությունը համընդհանուր էր, իշխանությունների դեմ բռնկվող ապստամբություններն ու խռովությունները՝ հաճախակի: Մանր էր վիճակը հենց մայրաքաղաքում:

Կայսրության ներքին դրությունը է՛լ ավելի էր վատթարացնում արտաքին վտանգը, բայց նրա առաջն առնելու հնարավորություններն այն չէին, ինչ Հուստինիանոս I-ի թագավորության սկզբում: Իտալական թերակղզու մեծ մասը նվաճվեց լանգոբարդների կողմից, կայսրության տիրապետությունն Իսպանիայում սասանվում էր վեստգոթերի հարված-

⁶³ «Византиски извори за историји народа Југославије», I, стр. 217—237.

⁶⁴ Извори за Българската история VI, Гръцки извори том III, София, 1960, стр. 226—289. Բուլղարիային վերաբերող հատվածները ավելի վաղ բուլղարերեն էր թարգմանել Վ. Բեշելիկը: В. Бешевлиев. Гръцки и латински извори за историята на България. Теофан, «Прометей», IV (1940), 3, стр. 27—30, 4, стр. 26—29, 5, стр. 23—29, 6, стр. 23—31.

⁶⁵ Сведения византийских писателей о Грузии, том IV, 1. Греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1941.

⁶⁶ Plezia M., Greckie i lacińskie źródła do naistarszych dziejow Słowian. Poznań—Kraków, 1952; Labuda G., Materiały Źródłowe do historii Polski epoki feudalnej, t. I. Słowiańszczyzna pierwotna, Warszawa, 1954.

⁶⁷ Gracianskij N. P.—Szkazkin S. D., Középkori történeti Crestomathia, Budapest, 1952—1953, t. I—II.

ների ներքո: Իսկ արևելքում դրությունը ողբալի էր: Շարունակվում էր Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հակամարտությունը Հայաստանի համար, Խոսրով I-ի օրոք հաջողությունների նժարը թեքվում էր պարսից կողմը: Դրությունը փոխվեց հօգուտ կայսրության Խոսրովի մահից հետո, երբ նոր արքայից արքայի՝ Որմիզդ IV-ի դեմ պայթեց Վահրամ Չուբինի ապստամբությունն ընդդեմ Սասանյան հարստության: Համոզված լինելով, որ սեփական ուժերով չի կարողանալու հաջողության հասնել, Վահրամ Չուբինը դիմեց Մուշեղ Մամիկոնյանի և այլ հայ նախարարների օգնության, բարենպաստ ելքի դեպքում խոստանալով նրանց վերականգնել հայոց թագավորութայունը. «Ձեզ տուեալ լիցի իմ,— գրում էր նա,— զՀայոց թագաւորութիւնն. զոր և դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցկապկոհ և ցղուն Աղուանից. և յԱսորւոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրժուին և զնոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ցԿեսարիա կապադովկացւոց»⁶⁸:

Մուշեղ Մամիկոնյանը և հայ մյուս նախարարներն ընդառաջ շնացին ապստամբի խնդրանքին, ականջ չկախեցին Հայաստանի ապագա անկախության մասին ապստամբի հիմնադուրկ խոսքերին: Իսկ պարսից պալատական ավագանին ստեղծված դրությունից ելք է գտնում, սպանելով Որմիզդ IV արքային, գահ բարձրացնելով նրա մանկահասակ որդի Խոսրովին: Վահրամ Չուբինի ապստամբութայունը ճնշելու համար ավագանին ստիպված դիմում է դարավոր թշնամի Բյուզանդիային, ռազմական օգնության դիմաց խոստանում զիջել Հայաստանի, Ասորիքի և Վրաստանի մեծ մասը, ինչ ընդհանուր առմամբ կատարվում է: 591 թ. կնքված պայմանագրով Խոսրով արքան «...ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչև ցՄժբին, և զերկիրն Հայոց՝ որ ընդ իւրով իշխանութեամբ էր, զտուն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեղր ծովուն Բզնունեաց, և զԱռեստաւան և ցԳոգովիտ գաւառ մինչև ցՀացին և ցՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն պարսից արքային»⁶⁹:

Այսպիսով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց երկու աշխարհակալ տերութայունների միջև, այս անգամ առյուծի բաժինն ընկավ Բյուզանդիային: Հայ ժողովրդի համար ստեղծվեց մի մղձավանջային

⁶⁸ Սեբեոս, էջ 78:

⁶⁹ Նույն տեղում, էջ 84:

ժամանակաշրջան: Երկու ախոյաններն էլ, նայած ժամանակին ու պահանջներին, մեկ հալածում, մեկ ջանում էին սիրաշահել հայերին և, նախ և առաջ, նրանց ավագանուն, նախարարներին: Սրանից էլ ահա այդ անվերջ գաղթերն ու տեղափոխությունները Հայաստանի մի մասից մյուսը⁷⁰: Հայաստանում առաջացավ մի քառասյին վիճակ, որն էլ ավելի էր վատթարացնում երկու ախոյան պետությունների որդեգրած հայաջինջ քաղաքականությունը: Հանրահայտ է Մավրիկիոս կայսեր վերագրվող թուղթը՝ պարսից արքայից արքային. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»⁷¹:

Մավրիկիոսը երբեկցե այդպիսի նամակ գրել է, թե ոչ, հարց է, բայց բոլոր դեպքերում Սեբեոսի երկում բերվածը ամենաճշգրիտ կերպով ներկայացնում է Հայաստանում ստեղծված դրությունը: Խոսքը, հարկավ, ոչ թե Հայաստանը համայն հայ ժողովրդից դատարկելուն էր վերաբերում, այլ նախարարներից ու բնիկ զինված ուժերից: Այդ մասին է գրում հենց Սեբեոսը. «Վասն իշխանաց ամենայն Հայաստանեայց և զաւրաց իւրեանց»⁷², թեև նույն հեղինակը մի այլ տեղում ցույց է տալիս, որ Մավրիկիոսը դեմ չէր կայսրության սահմանները վաշկատուն ցեղերի հարձակումներից ապահովել Թրակիայում նաև բազմամարդ հայկական գաղութ ստեղծելով⁷³:

Մավրիկիոսի և Խոսրով արքայի քաղաքականությունը Հայաստանում ուժեղ դիմադրության էր հանդիպում: Հայ նախարարները ջանում էին հնարավոր միջոցներով թոթափել օտարի լուծը և վերականգնել հայոց պետականությունը. «Պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ, — ասում էին նրանք, — և բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուցուք»⁷⁴: Նրանց հիմնական մտահոգությունը մեկն էր. «Ի բաց կայ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր,

70 Նույն տեղում, էջ 88, 94, 104, 105:

71 Նույն տեղում, էջ 86:

72 Նույն տեղում:

73 Նույն տեղում, էջ 105:

74 Նույն տեղում, էջ 87:

զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»⁷⁵,

Փոկաս կայսեր օրոք (602—610) շարունակվեցին և հրեադավաններին հալածանքները, որոնց հետևանքը եղավ այն, որ կայսրության տարբեր շրջաններում ու քաղաքներում բռնկվեցին ապստամբություններ ու խռովություններ: Այդ հանգամանքն իր հերթին թուլացրեց երկիրը, դյուրացրեց արտաքին թշնամիների ներխուժումները կայսրության տարածքը: Պարսից արքա խոսրով II-ը, օգտագործելով Փոկասի կողմից իր «բարերար» Մավրիկիոս կայսեր մահապատժի ենթարկվելը, վերացրեց խաղաղությունը և կայսրության դեմ պատերազմական գործողություններ սկսեց, որոնք գնում էին նաև Հայաստանի տարածքի վրա: Նա գրավեց Բյուզանդիային 591 թ. պայմանագրով զիջած մի շարք շրջաններ: Պարսկական զորքերը հասան մինչև Սատաղ, գրավեցին այն, ինչպես և Կարին, Օրենտիաս և Նիկոպոլիս քաղաքները, Կարինի հայ ազգաբնակչությունը բռնազաղթեցրին Համադան քաղաքը: Գերինների մեջ էր և երկաթնակ հայ կաթողիկոս Հովհանը, որ վախճանվեց օտարության մեջ⁷⁶:

Կայսրության բանակների կրած պարտությունները, Փոկասի բռնությունները երկրի ներսում պատճառ դարձան, որ 608 թ. կայսեր դեմ ապստամբություն նախապատրաստվի: Այն գլխավորեց Կարթագենի էքսարքոս Հերակլիոսը, ապագա նույնանուն կայսեր հայրը: Այդ ընթացքում ապստամբություն բարձրացրեց և Միջագետքի Բյուզանդական զորքերի հրամանատար հայազգի Ներսես զորավարը, որը գրավելով Նդեսիա քաղաքը, ամրացավ այնտեղ: Ստեղծված իրադրությունից շուշացավ օգտվել պարսից արքա խոսրովը: Նա ապստամբ Ներսեսին զինական օգնություն ուղարկեց:

610 թ. էքսարքոս Հերակլիոսը Փոկասի դեմ նախատորմիղ ուղարկեց իր նույնանուն որդու գլխավորությամբ: Փոկասը գահընկեց արվեց ու գլխատվեց, գահն անցավ Հերակլիոսի ձեռքը (610—641), որը և հաստատեց շուրջ մեկ դար գոյատևած Հերակլիոսների հարստությունը⁷⁷:

75 Նույն տեղում, էջ 92:

76 Նույն տեղում, էջ 109 և հտ.:

77 Բելգիացի անվանի բյուզանդագետ Ա. Գրեգուարը էքսարքոս Հերակլիոսին, Հերակլիոս կայսեր հոր անվերապահորեն հայազգի է համարում՝ ծնված Կարին-Թեոդոսուպոլսում: Նա Մավրիկիոսից (582) մինչև Ֆիլիպպիկոսի անկումը (713) ընկած ժամանակաշրջանը անվանում է «Բյուզանդական պատմության առաջին հայկական էրան» («The first Armenian era in Byzantine history»). Grégoire, An Armenian dynasty,

Հերակլիոսը գտավ քայքայված, արտաքին թշնամիների կողմից բռնակցված մի պետություն: Խոսքով II-ը դարձել էր կայսրության սարսափը: Հերակլիոսի՝ արքայից արքայի հետ հաշտություն կնքելու փորձերը հաջողություն չունեցան և պարսկական զորքերը գրավեցին Ասորիքը, Կիլիկիան և Բյուզանդիան հասցնելով մատակարարող Եգիպտոսը: Ահա այդ դժվարին ու ճակատագրական պայմաններում Հերակլիոսը նախաձեռնեց հզոր բանակի կազմակերպման աշխատանքներին: Սկիզբ առավ փոքրասիական նահանգներում վարչական նոր սիստեմի՝ բանակաթեմերի կազմակերպումը, որի էությունը կայանում էր նրանում, որ նահանգում և՛ ռազմական, և՛ վարչական համայն իշխանությունը կենտրոնացած էր լինում մի անձի՝ զորավարի ձեռքում: Նա տեղական բնակչությունից էր հավաքագրում զորքը, որը ծառայության դիմաց մշակելու հող էր ստանում: Փոքրասիական իր նշանակությամբ երկրորդ բանակաթեմը կոչվում էր Արմենիականների՝ բնակչության հիմնական կազմի հայազգի լինելու պատճառով:

Կայսրության արտաքին քաղաքականության գլխավոր հարցը մընում էր պարսկական վտանգը: Համոզված լինելով, որ այն հաղթահարել միաժամանակ պայքար մղելով երկու ճակատի վրա հնարավոր չէ, Հերակլիոսը ավարների հետ հաշտություն կնքելով, 622 թ. պարսիկների դեմ հարձակման անցավ: Նա՝ վեց տարվա ընթացքում ջախջախելով Խոսրով II-ի բանակները, հաղթական վերադարձավ Կոստանդնուպոլիս: Այս պատերազմների թատերաբեմ դարձան նաև Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Լազիկան: Հայկական զորաբանակները հայ զորավարների գլխավորությամբ պայքարում էին բյուզանդական կայսեր կողմում:

Բայց այն ժամանակ, երբ Հերակլիոսը տոնում էր իր փայլուն հաղթանակները, կայսրության հարավային սահմաններում արդեն հանդես է գալիս մի ուժ, որ դարեր շարունակ պիտի սպառնար կայսրության գոյությանն անգամ: Դա իսլամի դրոշի տակ միավորված արաբներն էին: Նրանք 633 թ. ներխուժեցին Պարսկաստան, 634 թ.՝ Ասորիք: 636 թ. օգոստոսի 20-ին Յարմուկ գետի ափին տեղի ունեցավ մի արյունահեղ

բ. 5—6, 8. Հերակլիոսին հայկական ծագում են տալիս և այլ ուսումնասիրողներ: Տե՛ս Charanis, The Armenians, p. 18. Ժանոթ. 41: Մասամբ հայկական՝ К о р р е т с, 'Εσχατολογικαὶ ἀναζητήσεις, էջ 71: Toumanoff, Caucasia, էջ 135: Վերջինս կարծում է, որ նրանք Նկեդյաց գավառի Արշակունիներից էին, հենվելով Սերեոսի մի տվյալի վրա, թե Արշակունիների շառավիղները Կոստաս II կայսեր «մերձաօրք» էին (տե՛ս Սերեոս, էջ 145): Հարցի մասին տե՛ս նաև ստորև, ծանոթ. 81:

ճակատամարտ, որտեղ կայսերական բանակը գլխովին պարտության մատնվեց, արաբները 638 թ. գրավեցին Անտիոք քաղաքը, ապա ձեռնարկեցին Ասորիքի և Միջագետքի նվաճումը: Նրանք 640 թ. մուտք են գործում բյուզանդական տիրապետության տակ գտնվող Հայաստանի տարածքը, գրավվում է Աղձնիքն ու Կորճայքը, Անձևացյաց իշխանը հպատակություն է հայտնում: Գրավելով Ջորապահակը, արաբական զորքերը մուտք են գործում Հայաստանի կենտրոնական նահանգները⁷⁸:

Սասանյանները Կադիսիայի և Նեհավենդի ճակատամարտերում ջարդ կրելով, վերանում են պատմության թատերաբեմից: Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանված Հայաստանը, օգտվելով այդ երկու ախոյանների կրած պարտություններից, հնարավորություն է ստանում միավորելու իր հողերը: Միավորված Հայաստանի իշխան է դառնում նախապես պարսկական Հայաստանի մարզպան ու սպարապետ Թեոդորոս Ռշտունին: Հայաստանը փաստորեն անկախ վիճակում էր, թեև շարունակում էր ճանաչել Բյուզանդիայի գերիշխանությունը:

Թեոդորոս Ռշտունու ջանքերը կանգնեցնելու արաբների ներխուժումները Հայաստան, հաջողություն չեն ունենում: Արաբները ներխուժում են Տարոն, ապա Բզնունիք, Ադիոփիտի, Բարկրիի և Կոգովիտի վրայով պաշարում ու գրավում են Դվինը և հսկայական ավարով հեռանում դեպի Միջագետք:

Բյուզանդական կայսր Կոստաս II-ը Թեոդորոս Ռշտունուն ճանաչեց պատրիկ և հայոց սպարապետ, նրան զինական օգնություն ուղարկեց, որով հայերը կարողացան ժամանակավորապես դադարեցնել արաբական արշավանքները Հայաստան:

Դժվարին էր Բյուզանդական կայսրության վիճակը հատկապես VII դ. 40-ական թվականների վերջում, երբ արաբները սկսեցին արշավանքները փոքրասիական թերակղզում, ուժեղ նավատորմիղ ստեղծելով նվաճեցին Կիպրոս կղզին: Շուրջ 650 թ. նրանք Ատրպատականի վրայով ներխուժեցին Հայաստան, բայց նրանց մի զորամասը գլխովին պարտություն կրեց Թեոդորոս Ռշտունու կողմից, բայց մյուսը Տայքի վրայով ներխուժեց Քարթլի: Բյուզանդիան ի վիճակի չէր պաշտպանել Հայաստանը, և Թեոդորոս Ռշտունին վճռեց խզել կապերը կայսրության հետ և Մուավիայի հետ դաշինք կնքել, ընդունել խալիֆայության գերիշխանությունը:

⁷⁸ Մանրամասն տե՛ս Тер-Гевондяк, Армения, стр. 18 и сл.

Թեոդորոս Ռշտունու որդեգրած նոր քաղաքականությունը դուր չեկավ կայսրության: Նրա դիրքերը թուլացնելու փորձերը հայ իշխանների միջև երկպառակություն հրահրելով արդյունք չտվեցին և Կոստաս կայսրը հսկայական բանակի գլուխն անցած ներխուժեց Հայաստան հասնելով մինչև Դվին քաղաքը: Կայսրության հաջորդությունները, սակայն, ժամանակավոր էին: Արաբները կարողացան 655 թ. նվաճել Հայաստանը, որին հաջորդեց Վրաստանի, Առանի, մերձկասպյան շրջանների և Դերբենդի նվաճումը:

Վիճակը փոխվեց Մուավիա խալիֆայի օրոք, երբ ծանր պատերազմները Բյուզանդիայի դեմ երկու ախոյաններին այն աստիճան թուլացրին, որ Հայաստանը շունչ քաշեց: VII դ. 60—70-ական թվականներին Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի օրոք քաղաքական, հետևավարար և տնտեսական վիճակը Հայաստանում բավական կայուն էր: Բայց 80-ական թվականներին, երբ այդ երկու աշխարհակալ տերությունների վիճակը կայունացավ, դարձյալ իրենց հայացքը հառեցին Հայաստանի վրա: Հուստինիանոս II կայսրը⁷⁹ 689 թ. նվաճեց Հայաստանը, Քարթլին և Առանը, իսկ Հայոց իշխան նշանակեց Ներսեհ Կամսարականին⁸⁰:

VII դ. վերջին տասնամյակը Բյուզանդիայի և խալիֆայության միջև անվերջ ու արյունահեղ պատերազմների մի շրջան էր, պատերազմներ, որոնց թատերաբեմը դարձյալ Հայաստանն էր: VIII դ. ըսկզբին արաբներն իրենց ենթարկեցին Հայաստանը, Քարթլին ու Առանը, ստեղծեցին «Արմինիա» փոխարքայությունը՝ Դվին մայրաքաղաքով: Հայ ժողովրդի պատմության մեջ բացվեց մի նոր էջ, օտար լծի դեմ ազատագրական պայքարի ու մաքառումների մի շրջան, որ պիտի շուրջ 150 տարի տևեր:

Արաբների կողմից ոչ միայն Հայաստանի, այլև Բյուզանդական կայսրության ամենակարևոր նահանգների՝ Ասորիքի, Փյունիկեի, Կիլիկիայի, Եգիպտոսի, Կիպրոս կղզու և բազմաթիվ այլ շրջանների համեմատաբար դյուրին նվաճումը բացատրվում է ոչ միայն արաբների հզորությամբ, կամ կայսրության թուլացմամբ՝ Սասանյան Պարսկաստանի և այլ թշնամիների դեմ նրա մղած երկարատև պատերազմներից: Դեռևս Հուստինիանոս I կայսեր օրոք սկիզբ առած կայսրության կազմում գտնվող բազմաթիվ, յուրաքանչյուրն իր ազդային ավանդույթ-

⁷⁹ Նրա մասին հատուկ տե՛ս Head, Justinian II.

⁸⁰ Тер-Гевондян, Армения, стр. 52.

ներով ու օրենքներով ապրող ու ղեկավարվող ժողովուրդները նույն սանրով սանրելու խիստ ու դաժան քաղաքականությունը չէր դադարիչ նրա հաջորդների օրոք: Քանի դեռ Հայաստանի փոքր մասն էր Բյուզանդիայի կազմում գտնվում, այդ քաղաքականությունը չէր կարող հայ ժողովրդի կյանքի հոգևոր, մշակութային և այլ բնագավառներում էական փոփոխություններ մտցնել: Առ առավելն այն կարող էր որոշ շափով ապազգայնացնել կայսրության կազմում գտնվող նահանգների հայությունը, բայց համայն հայ ժողովրդի վրա էական անդրադարձում ունենալ ի վիճակի չէր: Սակայն 591 թ. հետո, երբ Հայաստանի մեծագույն մասը մտավ Բյուզանդիայի կազմը, ապա հայերի համար սկզբվեց իր ազգային ավանդույթները, ազգային դեմքը պահպանելու մահու և կենաց մի պայքար: Մեզ հետաքրքրող շրջանում այն հանդես եկավ կրոնական բողի տակ, ազգապահպանման գործը գլխավորեց հայոց եկեղեցին, պետության կորստյան պայմաններում երկիրը և ժողովրդին միավորող հիմնական ուժը: Ահա այդ նկատառումով անհրաժեշտ է մի փոքր ավելի հանգամանորեն խոսել հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների մասին, քանզի նրանք պարզապես հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները սքողող մի վտարագույր են սոսկ:

Բյուզանդիան չէր կարող նպատակներին հասնել, քանի դեռ հայ ժողովուրդը եկեղեցական առումով չէր ենթարկված իրեն և հանդես էր գալիս կայսրության որդեգրած քաղկեդոնական դավանանքի դեմ: Բյուզանդիային մնում էր բոլոր միջոցներով հաղթահարել միակամությունը Հայաստանում, հայ ժողովրդին դարձնել քաղկեդոնական: Եկեղեցուն ենթարկվելը նախապայման էր նաև քաղաքական ենթարկման: Եվ կայսրությունը ամեն միջոցներով դեռևս V դ. սկսած փորձեց իրականացնել իր նպատակները⁸¹:

81 Այս առթիվ տարօրինակ կարծիք է հայտնել հույն բյուզանդագետ ակադեմիկոս Կ. Ամանատսը: Կանգ առնելով արարների սկզբնական հաջողությունների վրա, որոնք նա բացատրում է Ասորիքի և Պաղեստինի միաբնակների ատելությամբ գեղի քաղկեդոնական Բյուզանդիան, գրում է. «Եթե Բյուզանդիան հետևեր հնամենի հոմեական ավանդույթներին, եթե նա չջանար ընդհանուր լեզու գտնել միաբնակների հետ, այլ բռնությամբ հաստատեր ուղղափառությունը (իմա՝ քաղկեդոնականությունը) և իր հունարեն լեզուն, գուցե չկորչեր Ասորիքը: Բյուզանդիան սակայն ենթարկվեց հելլենիզմի ազդեցության, դարձավ լիբերալ, գործի չդրեց Հոմեական պետության դաժան միջոցները՝ բնդղեմ տարբեր ժողովուրդների» (Λεωντος, 'Ιστορία, τόμ. Α', σελ. 303).

V դ. առաջին կեսին բորբոքված դավանաբանական վեճերի հիմքում ընկած էր Քրիստոսի բնության հարցը: Ամենահուժկու շարժումը գլխավորեց նեստորիոսը, որի վարդապետության (նեստորականության) համաձայն Քրիստոսի մեջ առկա են մարդկային և աստվածային անձնավորությունները: Միաբնականներն ընդունում էին Քրիստոսի մեկ՝ աստվածային բնությունը: Քաղկեդոնի ժողովը (451) փորձեց միջին դիժգտնել և ընդունեց Քրիստոսի երկու բնությունները՝ մարդկային և աստվածային, մեկ անձնավորության մեջ: Քաղկեդոնի ժողովի դավանաբանական հավատամքն ընդունեցին հունական և հռոմեական եկեղեցիները, իսկ բյուզանդական Արևելքը՝ Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Ասորիքը մերժեցին այն:

Դավանաբանական այդ վեճերը, ինչպես ասվեց, սքոզում էին տարբեր պետությունների և ժողովուրդների դուռ քաղաքական ու մշակութային շահերի հակադրությունը: Իսկ այդ հակադրությունները ըզզացնել էին տալիս դեռևս Քաղկեդոնի ժողովից էլ առաջ: VIII դ. սկզբին գրված և հունարեն թարգմանությամբ պահպանված հայ-քաղկեդոնիկ անհայտ մի հեղինակի երկասիրությունը հանդիսացող և գիտությանը «Narratio de rebus Armeniae» խորագրով հայտնի աղբյուրի մեջ ասված է, որ Թեոդոսիոս II կայսեր 37-րդ տարում՝ 445—446 թթ., այսինքն Քաղկեդոնի ժողովից 6—7 տարի առաջ, հայերը, ձգտելով ինքնուրույնության, եպիսկոպոս ձեռնադրելու համար այլև չէին գնում Կեսարիա, ինչպես նախկինում⁸²:

Վիճական այլ էր Բյուզանդական կայսրության հպատակ Հայաստանում: Այստեղ հայոց եկեղեցին չէր կարող բացեիբաց հակադրվել պետության կամքին, թեև ոչ բոլոր հայ եպիսկոպոսները հպատակվում էին հունական եկեղեցու կարգադրություններին: 680 թ. Տրուլլի եկեղեցական ժողովի 32-րդ կանոնը դատասպարտում է բյուզանդական Հայաստանի հայ եկեղեցու ավանդույթներով ղեկավարվող հայ հոգևորականներին: Նման դիրք էին բռնում նաև Հայաստանի պարսկական մասից տարբեր պատճառներով Բյուզանդիա տեղափոխված հայոց ավագանու ներկայացուցիչները: Երբ հայոց իշխան Վարդանը 572 թ. Դվինում սպանելով պարսից մարզպան Սուրենին, փախավ Կոստանդնուպոլիս, ոչ մի կերպ չէր հաղորդվում քաղկեդոնիկ հոգևորականության հետ: Նա «ի հաղորդութենէ ի բաց եկաց ասելով թէ վարդապետը

⁸² Բարթիկյան, Narratio, էջ 462:

մեր ոչ հրամայեցին մեզ»⁸³։ Դրա վրա Հուստինոս II կայսրը եկեղեցական ժողով գումարեց⁸⁴, որին մասնակցելու հրավիրեց բյուզանդական Հայաստանի հայ եպիսկոպոսներին ու վարդապետներին և ստիպեց նրանց, այդ թվում և Վարդանին ու նրա մտերիմներին ընդունել Քաղկեդոնի ժողովը։ Նրանք, հարկավ առերես, «ձեռագրով զժողովն Քաղկեդոնի ընկալան»⁸⁵, մի մասը, վերադառնալով Հայաստան, այդուհանդերձ, տեղում քաղկեդոնականություն տարածելու փորձեր կատարեց։ Վերադարձողների գործունեության ոլորտներն էին Աղվանքը, Վրաստանը, Սյունիքը, որտեղ նրանք հավանաբար հաջողություններ չունեցան, բայց որոշ արդյունքի հասան Տաշիրում, Չորոփորում և Գարգմանում⁸⁶։

Ոչնչով չէր տարբերվում և Մավրիկիոս կայսեր եկեղեցական քաղաքականությունը հայերի նկատմամբ։ Դեռ ավելին, վիճակը բարդացավ 591 թ. հետո, երբ Հայաստանի 4/5 մասն անցավ կայսրության ձեռքը։ «Հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն (Մավրիկիոսից—Հ. Բ.) վերստին այլ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի»⁸⁷։ Հուստինոս II-ի նման նա ևս Կոստանդնուպոլսում եկեղեցական ժողով է գումարում, հրավիրում հայոց եպիսկոպոսներին։ Ընշման տակ «դարձեալ հայք ընկալան զժողովն Քաղկեդոնի ձեռագրով յաւուրս Մովսէսի կաթողիկոսի հայոց»⁸⁸։

Ստեղծված ծանր վիճակը ստիպում է Մովսես կաթողիկոսին գործնական միջոցների դիմել։ Նա պարսից տիրապետության տակ գտնվող Հայաստանի եպիսկոպոսների ու վարդապետների ժողով է գումարում և հրամայում «ամենևին ոչ հաղորդել ընդ Հռոմս»⁸⁹ հնազանդեալս քաղկեդոնական ժողովոյն»⁹⁰։ Դրա վրա Մավրիկիոս կայսեր կարգադրությամբ հարկավ, Կարինի Թեոդորոս եպիսկոպոսը Հայաստանի հունա-

⁸³ Фотия, О гробе, стр. 181.

⁸⁴ Բարբիկյան, Narratio, էջ 465, 466—467; Фотия, О гробе, стр. 182. Սխալմամբ Անանիա Շիրակացուն վերագրվող ժամանակագրության մեջ ցույց է տրված, որ այդ ժողովը գումարեց Տիրեբիոս կայսրը (578—582)։ Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 397; Հմմտ. Ստեփանոս Տարնեցի, էջ 141։

⁸⁵ Фотия, О гробе, стр. 182. Հմմտ. Բարբիկյան, Narratio, էջ 465, 466—467.

⁸⁶ Բարբիկյան, Narratio, էջ 466.

⁸⁷ Սերբոս, էջ 91.

⁸⁸ Фотия, О гробе, стр. 182; Բարբիկյան, Narratio, էջ 466—467; Վարդան վարդապետ, էջ 84.

⁸⁹ Իմա՝ հայ-քաղկեդոնականներին։

⁹⁰ Մովսես Կաղանկատվացի, էջ 303—304; Հմմտ. Ովստանես եպիսկոպոս, էջ 63.

կան մասի հայ հոգևորականության ժողով է գումարում և բյուզանդական Հայաստանում հաստատում հակաթոռ կաթողիկոսություն: Առաջին (և վերջին) հայ քաղկեդոնիկ կաթողիկոսը «Յովհան Թմն Սինական» էր: Ցավով է գրում Մովսես Կաղանկատվացին այս դեպքերի մասին. «Մովսես նստէր ի Դուին կաթողիկոս. պատշաճեցին և Հռովմայեցիքն Յովհաննու զկաթողիկոսարան յԱւանի՝ մօտ առ միմեանս»⁹¹:

Քիչ չէին նրանք, որոնք շքանկանալով ենթարկվել բյուզանդական իշխանությունների բռնություններին, լքեցին իրենց բնակության վայրերը և անցան պարսից տիրապետության տակ գտնվող Հայաստան, իրենց պապենական դավանանքը ազատ դավանելու համար⁹²: Բայց կային և այնպիսիք, որոնք ստիպված էին փախչել օտար երկրներ. «փախստական գնացեալ յաւտար երկիր վարէին» գրում է Սեբեոսը⁹³, անգամ կայսեր հրամանը արհամարհողներ⁹⁴: Ցավալին այն է, որ «բազումք հաւանեալ փառասիրութեամբ»⁹⁵ ընդունեցին Քաղկեդոնի դավանանքը: Սեբեոսը «փառասերների» տակ հավանաբար նկատի ունի հայոց ավագանու այն մասը, որ Բյուզանդական կայսրության մեջ պաշտոնների և պատվաստիճանների արժանանալու համար դավանափոխ էր լինում:

Տարբեր չէր վիճակը և պարսկական Հայաստանում ապրող քաղկեդոնիկ հայերի համար: Մավրիկիոս կայսեր մահից հետո, երբ սասանյան Պարսկաստանին հաջողվեց վերանվաճել մոտիկ անցյալում Բյուզանդիային զիջաց հայկական շրջանները և այնտեղի քաղկեդոնիկ հայերը հայտնվեցին միաբնակ հայ եկեղեցու իրավասության ոլորտում, նրանց կացությունը բարդացավ: Այս անգամ հայոց եկեղեցու հարցերով սկսեց զբաղվել և պարսից արքունիքը, որ ամեն ջանք էր թափում հայերին անջատելու բյուզանդական եկեղեցուց, հետևաբար և կայսրությունից: Խոսքով II արքան Տիգրանում 615—616 թթ. եկեղեցական ժողով է գումարում, որին մասնակցում են և բաղմաթիվ հայ իշխաններ ու եպիսկոպոսներ⁹⁶: Ինչպես պետք էր սպասել, քաղկեդոնականներ-

91 Մովսես Կաղանկատվացի, էջ 304:

92 «Կիրք քղբոց», էջ 151—152:

93 Սեբեոս, էջ 91:

94 Նույն տեղում:

95 Նույն տեղում:

96 Նույն տեղում, էջ 150—151: Երվանդ Տեր-Մինասյանը սխալ է համարում Սեբեոսի (և Ասողիկի) տեղեկությունները այս ժողովի մասին: Նրա կարծիքով վերջինիս գումարման միակ շարժառիթը նեստորականների կաթողիկոսության խնդիրն էր: Տե՛ս Տեր-Մինասյան, Պարսից ժողովը, էջ 55:

ընթացում տանուլ են տալիս, և չկարողանալով դիմանալ հալածանքներին «ոմանք անցան Տայք, ոմանք հոռոմոց երկիրը և վախճանվեցին օտարության մեջ»⁹⁷։

Բյուզանդիայի կրոնական քաղաքականությունը Հայաստանում չէր տալիս այն արդյունքները, ինչ կայսրությունն ակնկալում էր։ Մավրիկիոսի միջոցառումները ոչնչի չհանգեցրին և Հովհաննես հակաթոռ կաթողիկոսը եղավ առաջին և վերջին հայ քաղկեդոնիկ կաթողիկոսը։ Մավրիկիոսին հաջորդած կայսրերը շարունակեցին հայադավանների հալածանքները, թեև ջանացին և այլ միջոցների դիմելով հասնել արդյունքի։ Հերակլիոս կայսրը պարզ նկատեց, որ քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների պայքարը վնասում է կայսրության միասնությունը, թուլացնում նրան արաբական վտանգի հանդեպ։ Միաբնակ Ասորիքը, Եգիպտոսը, Հայաստանը բյուզանդական կայսրերի և Կոստանդնուպոլսի կղերի ճնշումներին դիմադրություն էին ցուցաբերում։ Հերակլիոսը և Կոստանդնուպոլսի պատրիարք Սերգիոսը այդ երկու հոսանքները հաշտեցնելու մի միջին ուղի որոնեցին⁹⁸։ Լույս աշխարհ եկավ միակամության՝ մոնոթելիտիզմի վարդապետությունը⁹⁹, որի համաձայն Քրիստոսն ունի երկու բնություն՝ աստվածային և մարդկային, բայց մեկ՝ աստվածային կամք։ Այս վարդապետությամբ զիջում էր կատարվում և՛ երկաթնականներին (ուսմունքը երկու բնությունների մասին), և՛ միաբնականներին (մեկ կամքի մասին վարդապետությունը)։ Եթե պետություն միասնությամբ շահագրգռված ավելի հեռատես պետական ու եկեղեցական գործիչներ ողջունեցին այս նոր վարդապետությունը, այն հակահարված ստացավ և՛ մեկ, և՛ մյուս դավանանքի ջերմեռանդ կողմնակիցների կողմից։ Պետության կենտրոնական մասի և միաբնակ հանգանների միջև դարեր շարունակ լայնացող ու խորացող անդունդը հնարավոր չէր կամրջել նման կիսատ միջոցառումներով։ Հերակլիոսին մնում էր անցնել արդեն որդեգրած բնությունների քաղաքականություն։ Նա օգտագործելով Սերեոսի բնութագրմամբ «փառասեր» մարդ-

97 Թառքիկյան, Narratio, էջ 467։

98 Հաշտեցման առաջին փորձը կատարել էր դեռևս Ջենոն կայսրը, հրապարակելով իր հայտնի «Հենոտիկոն»-ը («Միաւորութեան գիրք»-ը)։ Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 269—271։

99 Միակամության մասին ուշագրավ աշխատություն է գրել Գ. Հովսեփյանը, որը բարձր է գնահատվել ժամանակի մասնագետների կողմից. Owssepian, Monothelismus (տե՛ս Ա. Պ. Պապադոպուլոսի գրախոսությունը «Byzantinische Zeitschrift», Bd. IX, 2 Heft, 1900, էջ 544—546)։

կանց, տվյալ դեպքում բյուզանդական հայազգի զորավոր Մժեժ Գնունուն, ջանում է հայոց կաթողիկոս Եզրին (630—641) ստիպել գնալ Բյուզանդիա՝ քաղկեդոնական դավանանքն ընդունելու, հակառակ դեպքում սպառնում էր վերականգնել հակաթոռ կաթողիկոսությունը: Դարձյալ կարինում 633 թ. եկեղեցական ժողով է գումարվում, որին մասնակցում է Եզր կաթողիկոսը: Սյունյաց եպիսկոպոս Մաթուսաղան հրաժարվում է գնալ և հայոց դավանանքի շարադրանքն ուղարկում է Հերակլիոս կայսեր¹⁰⁰ իր աշակերտ Թեոդորոսի միջոցով: Կայսեր ճնշման տակ Եզրը և հայ մյուս բարձրաստիճան եկեղեցականներն ընդունում են Քաղկեդոնի դավանանքը¹⁰¹:

Հերակլիոս կայսեր նման բռնությունները չէին կարող հայության, և առաջին հերթին հայ աղնվականների մեջ չառաջացնել թշնամություն դեպի կայսրը: Եվ պատահական չէ, որ Հերակլիոսի դեմ նյութված մի շարք դավադրությունների մեջ նրանք գործուն մասնակցություն են ունենում: Հիշատակելի են Վահան Խորխոռունին, Սմբատի՝ Խոսրով Շում մականվանյալի, որդի Վարադադիոց իշխանը, Դավիթ Սահառունին, որոնք «միաբանեալ սպանանել զԵրակլոս»¹⁰²: Նրանց հետ էր և Բյուզանդիայում ծառայող հայոց զորքը¹⁰³:

Ստեղծված անդունդը հնարավոր չեղավ կամրջել նաև Հերակլիոսի հաջորդների օրոք: Կոստաս II կայսեր ժամանակ Հայաստանում գտնվող բյուզանդական զինվորականները բողոքում էին կայսեր և Կոստանդնուպոլսի պատրիարքին, թե «իբրև դանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ»¹⁰⁴, որ հայերը «անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի և նպովեն զնոսա»¹⁰⁵: Կայսրը դիմում է հայոց կաթողիկոս Ներսես Գին և Թեոդորոս Ռշտունուն, հրամայելով «վասն միաբանութեան հաւատոյ» ժողով գումարել: Այն գումարվում է Դվինում և որոշում է, թե հայերը նպատակ չունեն հրաժարվելու իրենց հայրենավանդ դավանանքից: Ներսես կաթողիկոսը սակայն, որ երկար տարի-

100 Տե՛ս Մատենադարանի № 8194 ձեռագրի 126ա—135բ էջերը. «Թուղթ Մաթուսաղայի Սիւնեաց եպիսկոպոսի զոր գրեաց հրամանաւ Եզրի հայոց կաթողիկոսի և այլ եպիսկոպոսաց առ թագաւորն Հերակլն վասն հաւատոյ»: Հմմտ. Maclet, Notices, էջ 248: Ստեփաննոս Օրբելեան, էջ 115:

101 Բարբիկյան, Narratio, էջ 468, Φομυα, Ο ρροβε, էջ 182:

102 Սեբեոս, էջ 133:

103 Նույն տեղում:

104 Նույն տեղում, էջ 148:

105 Նույն տեղում:

ներ ապրել էր հունական միջավայրում և հունական կրթությամբ էր ստացել, այս հարցում հետևողական չէր: Սերեոսը գրում է նրա մասին, թե «հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի, և ի վերայ տումարին Լևոնի»¹⁰⁶: Նա «ի արտի իւրում ծածկեալ ունէր զթիւնս դառնութեան, և խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն»¹⁰⁷: Այն հանգամանքը, որ նա «ի վեր հանել զբանն ոչ համարձակէր»¹⁰⁸, ցույց է տալիս, որ քաղկեդոնականները Հայաստանում թույլ էին: Սակայն երբ Հայաստան եկավ Կոստաս կայսրն իր բանակներով, կաթողիկոսը բավական ուժ գտավ բացահայտելու իր քաղկեդոնիկ դավանանքը: Նա ոչ միայն Դվինի սբ. Գրիգոր եկեղեցում հաղորդվեց Կոստաս կայսեր հետ և հունարեն պատարագ մատուցեց, այլ օգտվելով տրված առիթից «մատնէր զմի մի յեպիսկոպոսացն, և բեկանէր ահիւ: Մինչ զի առ մահուն եկիւղիւ ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին»¹⁰⁹:

Երբ Կոստաս կայսրն իր բանակներով ստիպված հեռացավ Հայաստանից, ներսես կաթողիկոսը շահամարձակվեց մնալ տեղում և կայսեր հետ գնաց Կոստանդնուպոլիս, որտեղից նա վերադարձավ Հայաստան, ապաստանեց իր հայրենի Տայք նահանգում, որտեղ, հավանաբար, քաղկեդոնականներն իրենց ավելի ապահով էին զգում: Միայն Թեոդորոս Ռշտունու մահից հետո նա համարձակվեց վերադառնալ իր աթոռին: Արաբական վտանգը դեռ այնքան շոշափելի չէր այն ժամանակ, անգամ մինչև VII դ. վերջին տասնամյակները, երկրում ավելի զգալի էր Բյուզանդական կայսրության տիրապետությունը: Կոստաս II կայսրն առանց այլևայլի Հայաստանի մասին ասում էր. «աշխարհն իմն է»¹¹⁰, և չէր տատանվում միջամտել անգամ պարսկական Հայաստանի ներքին գործերին: Հայերը բազմաթիվ փորձեր կատարեցին թոթափելու բյուզանդական լուծը: Կոստաս կայսեր թագավորության 12-րդ տարում Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ «ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց»¹¹¹: Մի քիչ անց նույն բանն արեց և Մուշեղ Մամիկոնյանը. «իսկ

¹⁰⁶ Սերեոս, էջ 167:

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Նույն տեղում:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 165:

¹¹¹ Նույն տեղում, էջ 164:

Մուշէղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց կողմանէն...»¹¹², երկու Հայաստանների ղեկավարները գիտակցեցին, որ անհրաժեշտ է վերացնել երկու Հայաստանների միջև եղած հակասութիւնները, որոնք մեծ տերութիւններն էին բորբոքում: «Իսկ իշխանքն Հայոց որ ի Յունաց և որ ի Տաճկաց կողմանէ, Համադասալ և Մուշէղ և այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, և արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արինահեղութիւն»¹¹³:

Պակաս դժգոհութիւններ չէին առաջացնում Բյուզանդական կայսրութեան կողմից հայկական զորաբանակների ու զորահրամանատարների առաքումը երկրի տարբեր հեռավոր շրջանները: Հայկական զորքերի և նրանց հրամանատարների դասալքութիւնները դարձել էին սովորական երևույթ: Այս շրջանում շարունակվեց և հայ նախարարների մասնակցութիւնը կայսեր դեմ կազմակերպված հակապետական դավադրութիւններին ու ելույթներին: Կոստաս կայսեր դեմ կազմակերպված ապստամբութեանը մասնակցում էին բազմաթիւ հայ ազնւականներ՝ Գեորգ մագիստրոսը, Մանուելը, որ Կոստանդնուպոլսի մագիստրոսի պաշտոնն ուներ, Թրակացոց զորքերի հրամանատար Սմբատը, վերոհիշյալ Մանուելի փեսան, և ուրիշներ: Թրակացի զորքերի տված զեկուցագրի համաձայն այս ապստամբութեան կազմակերպիչը Սմբատ ասպետն էր¹¹⁴:

Ստեղծված վիճակից դուրս գալու, հակասութիւնները վերացնելու ուղղութեամբ փորձեր կատարելու մասին ամենեւին էլ մտահոգված չէին Հերակլիոսին հաջորդած կայսրերը: Նրանք նույն ոգով շարունակեցին եկեղեցական այդ քաղաքականութիւնը: Հուստինիանոս II-ը (685—695, 705—711), Հերակլիոսի հիմնադրած հարստութեան վերջին ներկայացուցիչը, 690 թ. Կոստանդնուպոլսում եկեղեցական ժողով է գումարում, մասնակցելու հրավիրում հայոց Սահակ Գ կաթողիկոսին (678—705) և բազմաթիւ այլ եպիսկոպոսների, որոնք առերես ստորագրում են միութեան թղթի տակ, բայց գալով Հայաստան, հրաժարվում դրանից և ամուր կանգնում հայրենավանդ դավանանքի դրույթների վրա:

Հայաստանում արաբական տիրապետութեան ժամանակ, երբ Բյուզանդական կայսրութիւնը խալիֆայութեան դեմ մահու և կենաց մար-

¹¹² Նույն տեղում, էջ 173:

¹¹³ Նույն տեղում, էջ 171—172:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 163:

տեր էր մզում, թվում է, թե նա ոչ մի ցանկություն, ավելի ճիշտ՝ կարողություն չպիտի ունենար միջամտելու հայոց կրոնական գործերին, ջանքեր թափեր Հայաստանում և հարևան երկրներում քաղկեդոնականություն տարածելու: Բայց, ավագ, դա այդպես չէր: Բյուզանդական կայսրությունը VIII դ. առաջին երեսնամյակում չէր դադարում տենդագին գործունեություն ծավալել նախ Աղվանքում¹¹⁵, ապա Հայաստանի այնպիսի հեռավոր մի նահանգում, ինչպիսին էր Սյունիքը: Պահպանվել է Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի՝ (715—730) եկեղեցիների միության վերաբերյալ մի անթվակիր նամակ՝ ուղղված Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսին: Պատրիարքը առաջ քաշելով «աւրինակ բարեպաշտութեան և առ միմեանս կապակցութեան հոգևոր սիրոյ և միաբանութեան հաւատոյ» քարոզը, իրեն համարում էր մոլորյալ հոտի փրկությամբ մտահոգված («որպէս մոլորելոց զհետ ընթացեալ»)¹¹⁶ քաջ հովիվ:

Այդպես գրելու համար պատրիարքը անշուշտ ուներ հիմքեր: Հայաստանն այն ժամանակ գտնվում էր ահավոր վիճակում, կայսրությունն ուղեց օգտագործել այդ հանգամանքը (ինչպես և X դ. սկզբում, Ատրպատականի Յուսուֆ ամիրայի խժոժությունների ժամանակ¹¹⁷): VIII դ. սկզբում արաբ խալիֆան վճռել էր «բառնալ յաշխարհէս Հայոց զտոհմ նախարարաց նոցին հեծելովք»¹¹⁸, որի պատճառով հայոց իշխան Սմբատ կուրապաղատը «գրէր առ արքայն Յունաց և խնդրէր զօրի նմանէն յօգնականութիւն»¹¹⁹: Հայ-հունական զորքերը պարտվում են, 705 թ. տեղի են ունենում նախճավանի և Խրամի հայտնի դեպքե-

¹¹⁵ Մովսես Կաղանկատվացի, էջ 338:

¹¹⁶ «Գիրք քղբոց», էջ 373: Ստեփանոս Սյունեցու անունով պահպանվել է և Անտիոքի պատրիարքին ուղղված մի պատասխան նամակ՝ «Վասն հաւատոյ դաւանութեան», որը վկայում է, որ հունական եկեղեցին մի քանի ուղղությամբ էր գործում Հայաստանում: Ասենք, որ Անտիոքի պատրիարքին ուղղված այս պատասխան նամակը Շ. Գասպարյանը կեղծ է համարում (տե՛ս Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, էջ 40), թեև Բյուզանդիայի, նախկինում և հետագայում ևս, Սյունիքում ծավալած տենդագին գործունեությունը վկայում է, որ կայսրությունը ինչ որ հատուկ մտադրություններ ուներ Հայաստանի այս անկյունում: Գիտենք, որ 633 թ. Հերակլիոսն էր Սյունիքում գործունեություն ծավալել: Անգամ X դ. Սյունիքի եպիսկոպոսի հետ նամակագրություն պիտի պահպաներ բյուզանդական արքունիքը (տե՛ս Darrouzès, Un recueil epistolaire, p. 115) և, հավանաբար, որոշ հաջողությունների հասներ (Հովհ. Սկիլիցես, էջ LXV):

¹¹⁷ Տե՛ս Բարբիկյան, Նիկողայոս Միստիկոսի թղթերը, էջ 253:

¹¹⁸ Ղևոնդ, էջ 31,

¹¹⁹ Նույն տեղում, էջ 32:

րը, իսկ վերապրած հայ նախարարների մի մասը Սմբատ կուրապաղատի գլխավորությամբ ապաստան են գտնում Բյուզանդիային ենթակա շրջաններում¹²⁰:

Ահա համառոտ գծերով հայ-հունական կրոնական քողի տակ հանդես եկող քաղաքական ու մշակութային հակասությունների մասին: Բայց այդ հակասություններն ունենին նաև այլ՝ սոցիալ-տնտեսական և դասակարգային բովանդակություն: Հարկային ծանր լուծը, տեղական իշխանությունների կամայականությունները խանգարում էին կայսրերի կուռ պետություն ստեղծելու ձգտումներին, դեռ ավելին, այդ բնակչությունը ոտքի էին հանում և՛ դասակարգային, և՛ ժողովրդաազատագրական պայքարի: Այդ պայքարի ամենավառ օրինակը Հայաստանում պավլիկյան շարժումն էր, որ սկիզբ առավ VIII դ. կեսերին, հենց բյուզանդական Հայաստանում¹²¹: Այդ շարժման մասին շատ է գրվել և ավելորդ է այստեղ նրա վրա հատուկ կանգ առնել¹²², բայց Թեոփանեսի ժամանակագրության առնչությամբ պիտի ասենք, որ մեր հեղինակը առաջին բյուզանդական պատմիչն է, որ խոսում է այդ աղանդի մասին և՛ ուղղակի, և՛ անուղղակի: Նրա առաջին անուղղակի տեղեկությունը աղանդավորների և նրանց ազգային պատկանելության մասին վերաբերում է Ֆիլիպպիկոս-Վարդան կայսեր (711—713) ժամանակաշրջանին: Հիշյալ կայսրը, գրում է Թեոփանեսը, «արտաքսեց հայերին իր երկրից և ստիպեց բնակվել Մելիտենեում և Չորրորդ Հայքում»¹²³: Նույն դեպքերի մասին ավելի մանրամասն է գրում Միքայել Ասորին. «Այս ժամանակ,— գրում է նա,— հռոմայեցիների կայսր Ֆիլիպպիկոսը արտաքսեց հայերին իր կայսրության սահմաններից: Նրանք դուրս գալով ապաստանեցին արաբների մոտ: Վերջիններս նրանց բնակեցրին Մելիտենեում և նրա շրջակայքում և Չորրորդ Հայ-

¹²⁰ Նույն տեղում, էջ 35:

¹²¹ Պավլիկյանների զգալի մասը հավանաբար հայեր էին կամ, համեմատյալ դեպք, ոչ հույներ: Պահպանվել են պավլիկյանությունից «դարձի եկող» աղանդավորների համար ընդունված կանոնները: Աղանդավորը պետք է նզովեր աղանդի հիմնադիրներին, և «եթե նա հունարեն չգիտեր, ապա այդ բանը պիտի կատարեր թարգմանի միջոցով» (տե՛ս Methodii, De iis, col. 1324).

¹²² Վերջին 20 տարում լույս տեսած գործերից հիշատակելի են. 'Αναστασιος, Οι Παυλιχτανοί; Loos, Le mouvement Paulicien; Garsoïan, The Paulician heresy; Бартукаян, Источники; Лунинц, Очерки; Մելիք-Բախշյան, Հայաստանը; Lemerle, Les Pauliciens.

¹²³ Տե՛ս ստորև, էջ 94:

քում: Այդ հայերը դարձան արաբների թաղավորության դաշնակիցները և հռոմայեցիների կայսրության հակառակորդները»¹²⁴:

Ինչպես ցույց է տալիս Թեոփանեսը, 752 թ. կոստանդին V կայսրը Մելիտենեից և Թեոդոսուպոլսից Ֆիլիպպուպոլիս հայեր գաղթեցրեց, որոնք Թրակիայում տարածեցին պավլիկյան աղանդը: Այս փաստը վկայում է, որ Ֆիլիպպիկոսի կողմից կայսրությունից արտաքսված և Մելիտենեում ու Չորրորդ Հայքում հաստատված հայերը պավլիկյան աղանդավորներ էին և այդ հանգամանքն էր նրանց՝ երկրից արտաքսվելու գլխավոր պատճառը:

Թեոփանեսի և Միքայել Ասորու այս տեղեկություններին արձագանքում է նույն այդ դեպքերի ժամանակակից կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728): Նա իր «Ընդդէմ պաւղիկեանց» ճառի հենց սկզբում, գրելով պավլիկյանների մասին, ցույց է տալիս, որ նրանք «խորամանկեալ գտին շարութեանն իւրեանց զէն խողխողիշ քրիստոսասիրաց անձանց, դաշնակից լինելով բռնակալաց կրճատելոցն»¹²⁵, այսինքն՝ արաբների: Աշխատավոր զանգվածները միամտորեն կարծում էին, որ արաբներն իրենց ազատագրելու են բյուզանդական բռնություններից:

Արաբներն ամենեին էլ դեմ չէին օգտվելու նրանց այդ մոլորությունից և աղանդավորների ռազմական կարողությունները օգտագործելու նպատակով նրանց հաստատում էին արաբաբյուզանդական սահմանին մոտիկ: Արաբները, հավանաբար, օգտագործում էին նրանց անգամ բյուզանդացիների դեմ մղած իրենց գաղափարական պայքարում: Դարձյալ նույն ժամանակներում իշխած արաբ խալիֆա Օմարը (717—720) Լևոն III կայսեր գրած նամակում նրան այնպիսի մի մեղադրանք է ներկայացնում, որի աղբյուրը հենց պավլիկյաններն էին: Խալիֆան գրում է կայսեր. «...Ընդէ՞ր զոսկերս առաքելոց և մարգարէից պատուէք և կամ զնշան խաչին, որ դատապարտութեան զործարան էր ըստ օրինաց, կամ զպատկերս, զոր պատուէք...»¹²⁶: Գեորգ Վանականի ասելով, պավլիկյանները «լուտանքներ են թափում պատվա-

¹²⁴ Michel le Syrien, t. II, p. 482: Հմմտ. Бортукеян, К вопросу, стр. 127: Նույնի՝ Источники, էջ 34:

¹²⁵ Տեառն Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1834, էջ 78: Յովհաննես Օձնեցու երկերի մյուս հրատարակություններում «կրճատելոցն» (այսինքն՝ թլիափված, արաբ, մուսուլման) բառը հասկանալի պատճառով կրճատված է:

¹²⁶ Անոնդ, էջ 44:

կան խաչի հասցեին, ասելով, թե խաչը հենց Քրիստոսն է և պետք չէ երկրպագել փայտը, քանզի այն անիծված գործիք է»¹²⁷։ Իսկ Պետրոս Սիկիլիացու ասելով պավլիկյանները խաչը համարում էին հասարակ փայտ, ոճրագործների՝ անեծքի ենթակա գործիք, որը չպետք է երկրպագել և համբուրել։

Սակայն պավլիկյան աղանդավորների սպասածները շատ շուտով հօգս ցնդեցին։ Արաբական ծանր լուծը, կամայականություններն ու հալածանքները ցույց տվեցին, որ նրանք գործ ունեն ավելի դաժան ու վատթար թշնամու հետ և պատրաստ էին զենքը ձեռքին համայն հայ ժողովրդի հետ նրանց դեմ պայքարի դուրս գալ։

Ահա այսպիսին էր վիճակը կայսրության արևելյան նահանգներում։ Բայց VII դ. 60—70-ական թվականներից սկսած կայսրության առջև կանգնեց նաև պրոտոբուղարների վտանգը։ Հաղթելով բյուզանդական բանակներին և հաստատվելով Մերձդանուբյան շրջաններում, նրանք 681 թ. ստիպեցին կայսրությանը ճանաչել իրենց պետությունը, վճարել տարեկան որոշակի հարկ։ Սա առաջին բարբարոսական պետությունն էր, որ կազմավորվեց արևելահռոմեական կայսրության սահմաններում¹²⁸։ Թշնամիների կողմից կայսրության հողերի նվաճումները արևելքում և արևմուտքում, սահմանների նեղացումն ունեցավ այն հետևանքը, որ փաստորեն վերացավ նախկին Արևելահռոմեական բազմազգ կայսրությունը և նրա փոքրացած սահմաններում ստեղծվեց էթնիկական առումով ավելի միասնական մի հունական պետություն¹²⁹։ Հերակլիոսի և պատրիարք Սերգիոսի որդեգրած նոր վարդապետությունը՝ միակամությունը, այլևս պետք չէր, քանի որ ուժ սիրաշահելու համար էր այն կյանքի կոչվել, գտնվում էին օտար տիրապետության տակ, իսկ բուն երկրում, առավելապես երկաթնակ Բյուզանդիայում միակամության գաղափարը կարող էր միայն վնասել։ Կոստանդնուպոլսում գումարված VI Տիեզերական ժողովում (680—681) միակամությունը դատապարտվեց, հայտարարվեց հերձված ու մերժվեց։

Հուստինիանոս II-ի օրոք կայսրությունը հաջողությամբ հաղթահարեց Թրակիայից մինչև Թեսաղոնիկե ողողած սլավոնների՝ առանձին պետություն կազմակերպելու վտանգը, հաջող պատերազմ մղեց

¹²⁷ Бартикян, Источники, стр. 199.

¹²⁸ «История Византии», т. I, стр. 373.

¹²⁹ Նույն տեղում։

արաբների դեմ, որն ավարտվեց խալիֆա Աբդ ալ-Մալիքի հետ հաշտության կնքամբ, որի համաձայն արաբներն ու բյուզանդացիներն, ի միջի այլոց, իրար միջև են բաժանում Հայաստանից, Իբերիայից և Կիպրոսից գանձվող հարկերը¹³⁰:

Այդ շրջանում հայերի դերը Բյուզանդական կայսրության մեջ, հատկապես բանակում, զգալի էր: Նրանք կայսրության տարածքում, ավելի որոշակի՝ Օպսիկիոն բանակաթեմում, հին Պերգամոսում գաղութ էին ստեղծել¹³¹, որտեղից էր ծագում բյուզանդական գահին 711—713 թթ. տիրացած Վարդան-Փիլիպպիկոսը: Ավելի մարդաշատ ու կարևոր էր Թրակիայի Ֆիլիպպուպոլիս քաղաքում ստեղծված հայկական գաղութը, որի հիմնական կորիզը պալլիկյան աղանդավորներից էր բաղկացած:

Ֆիլիպպիկոս կայսեր տապալումից հետո կայսրությունը բզկըտվում էր ներքին գահակալական պայքարում, որում հաղթանակ տարավ Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լևոնը: Նրան օժանդակում էին նաև Արմենիականների բանակաթեմի զորքերը: Լևոնը, որ հյուսիսային Ասորիքի Գերմանիկիա (Մարաշ) քաղաքից էր, աղբյուրներում սխալմամբ իսավրացի է կոչված, նրա հիմնադրած հարստությունը՝ Իսավրական, այնինչ այժմ ընդունված է այն Ասորական անվանել¹³²:

Լևոն III-ը, (717—741), բյուզանդական ամենաընդունակ ու կարող կայսրերից մեկը, իր թագավորության առաջին տարին իսկ ջախջախեց Կոստանդնուպոլիսը պաշարած արաբներին, զգալի հարվածներ հասցրեց նրանց Փոքր Ասիայում: Նրան հաջողվեց դաշինք կնքել սկզբում բուղարների խան Տերվելի, ավելի ուշ՝ խազարների խաքանի հետ, վերջինիս հետ դաշինքը ամրապնդեց նաև խնամիական կապերով: Լևոն III-ի որդի Կոստանդինը կնություն առավ խաքանի դստեր: Այդպիսի պայմաններում Լևոն III-ը Փոքր Ասիայի Ակրոյինոն քաղաքում 740 թ. արաբների դեմ փայլուն հաղթանակ տարավ:

Լևոն III-ը հսկայական զործունեություն ծավալեց պետությունն ու բանակն ամրապնդելու ուղղությամբ: Նահանգային ավագանուն թու-

¹³⁰ Տե՛ս ասորե, էջ 74: „История Византии“-ում (հտ. II, էջ 42) գրված է, որ իրր հաշտության պայմանագրով խալիֆան կայսեր զիջեց Հայաստանի և Կիպրոսի մի մասը:

¹³¹ Gelzer, Pergamon (Գելցեր, Հայ հասարակությունն ի Պերգամոն):

¹³² «Իսավրացիները» հայկական ծագման մասին տես Bréhier, „Orient ou Byzance?“, p. 134: Նաև Ալիշան, Բ Վարդան կայսր, էջ 314: Հմմտ. նաև Աղոնց, Նամակներ, էջ 104:

լացնելու և շեղոքացնելու նպատակով փոքրացրեց բանակաթեմերը: Լեոն III-ի անվան հետ է կապված Բյուզանդական կայսրության պատմության մեջ դարաշրջան կաղմող և պատկերամարտություն անունն ստացած մի շարժում, որը շուրջ 120 տարի հուզեց կայսրության բնակչության բոլոր խավերն ու դասակարգերը¹³³: Այդ շարժման պատմությանը Թեոփանեսն իր ժամանակագրության մեջ հսկայական տեղ է հատկացնում, այդ պատճառով անհրաժեշտ է ավելի հանդամանորեն կանգ առնել պատկերամարտության վրա:

Ծիսակատարությունների ձևերն ավելի քան եկեղեցական դոգմաները հուզում էին ժողովրդական լայն զանգվածներին, և պատկերների պաշտամունքի շուրջ ընթացող վեճերը դարձան համընդհանուր: Բյուզանդական հասարակության տարբեր շերտերն իրենց վերաբերմունքով դեպի սրբապատկերների պաշտամունքը, արտահայտում էին իրենց քաղաքական, սոցիալական ու մշակութային ձգտումները¹³⁴: Պատկերամարտությունը ծագեց որպես ժողովրդական զանգվածների շարժում, որը փորձեց օգտագործել նահանգային կալվածատեր ազնվականությունը՝ ընդդեմ մայրաքաղաքի հոգևոր ու աշխարհիկ տիրոջների, իսկ կայսրը՝ իր քաղաքական ու տնտեսական դիրքերը ամրապնդելու, եկեղեցին իրեն ենթարկելու, եկեղեցու դարեր շարունակ դիզած հարստություններին տիրանալու համար¹³⁵:

Այստեղ պետք է ընդգծել, որ պատկերամարտությունը Բյուզանդիայում չի ծագել «Իսավրական» հարստության կայսրերի օրոք: Պատկերների պաշտամունքի հարցը միշտ էլ հուզել է պաշտոնական եկեղեցին: IV դ. սկզբում էլվիրի եկեղեցական ժողովում հատուկ կանոն է ընդունված սրբապատկերների պաշտամունքի դեմ: Եվսեբիոս Կեսարացին, Եպիփան Կիպրացին, ապա Մաքբուգի եպիսկոպոս Փիլոքսենոսը պատկերների պաշտամունքի հակառակորդներ էին¹³⁶: Պատկերամարտությունը տարածված էր նաև Հայաստանում, բայց դա չի նշանակում, որ հայոց եկեղեցին պատկերամարտ էր¹³⁷, և ճիշտ չէ այն կարծիքը, որ իսա-

¹³³ Սթեն Հավատանք պատմիչ Ղևոնդին, սկզբնական շրջանում Լեոն III-ը սրբապատկերների պաշտպան ու ջատագով էր: Օմար խալիֆային ուղղած իր նամակում նա գրում էր. «ոչ թե փայտին և դեղձին (ներկին Հ. Ք.) որ ի վերայ փայտին՝ նրկիր պազանեմք» (Ղևոնդ, էջ 91), այլ կենդանագրյալին:

¹³⁴ «История Византии», т. II, стр. 52.

¹³⁵ Նույն տեղում, էջ 52—53:

¹³⁶ Der Nersessian, Une apologie, p. 388—389: (Այս հոդվածի հայերեն թարգմանությունը տես. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը, էջ 7—30):

¹³⁷ Տեր-Ներսեսյան, VII դարի մի երկ, էջ 29:

վրրական պատկերամարտությունը կապված է կայսրության արևելյան նահանգների, այդ թվում և Հայաստանի, ինչպես և իսլամի պատկերամարտ կրոնի ազդեցության տակ դանվող Ասորիքից Բյուզանդիա տեղափոխված բնակչության հետ¹³⁸։ Այդ բանը ժխտվում է բազմաթիվ փաստերով¹³⁹։

Հայոց եկեղեցին դեմ չէր սրբապատկերների պաշտամունքին¹⁴⁰։ Ղևոնդ պատմիչի ասելով հայոց Աշոտ Բագրատունի պատրիկը «շինէր ղեկեղեցին Դարինից յիւրում ոստանին, և զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտից արևու մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր ի նմա»¹⁴¹։

Վրթանես Քերթոզի անվամբ պահպանված և պատկերամարտների դեմ ուղղված մի երկ ցույց է տալիս, որ դեռևս VI դ. վերջում և VII դ. սկզբում հայոց եկեղեցում եղել են սրբապատկերներ, որ միաժամանակ եղել է պայքար նրանց պաշտամունքի դեմ, որի պաշտպանությամբ ահա հանդես է գալիս Վրթանես Քերթոզը։ Նրա երկը համարվում է պատկերամարտների դեմ ուղղված հնագույն աշխատությունը¹⁴²։ Պատկերամարտների դեմ գրել է նաև Հովհան Մայրապոմեցին իր 682 կամ 683 թվականին գրած նամակում¹⁴³։

Արարական տիրապետության շրջանում նվաճողները պայքարել են սրբապատկերների պաշտամունքի դեմ։ Եզիդ II (720—724) խալիֆան նույն Ղևոնդի ասելով «տայր հրաման փշրել և խորտակել ղկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան տեառն մերոյ և փրկչին և նորին աշակերտացն։ Խորտակէր և զնշան տերունեան խաչին Քրիստոսի, զոր ուրեք ուրեք կանգնեալ էին յանուն ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեանն»¹⁴⁴։

Բայց հարցը կայանում է նրանում, որ VIII դարի 20-ական թվականներին սկիզբ առած պաշտոնական պատկերամարտությունը ընդհանուր ոչինչ չունի վաղ շրջանի պատկերամարտության հետ։ Վաղ շրջ-

¹³⁸ «История Византии», т. II, стр. 52.

¹³⁹ *Der Nersessian*, Image worship, p. 405 sq.

¹⁴⁰ *Der Nersessian*, Une apologie, p. 402.

¹⁴¹ Ղևոնդ, էջ 16։

¹⁴² *Der Nersessian*, Une apologie, p. 379։ Նույնի՝ Le peinture։ Дурново, Краткая история, Команджян, Цвет։ Պատկերամարտության մասին (հայկական աղբյուրների օգտագործմամբ) տե՛ս նաև Gero, Notes, p. 23—42.

¹⁴³ Մովսես Կաղանկատվացի, էջ 302—305։ *Der Nersessian*, Image worship, p. 406.

¹⁴⁴ Ղևոնդ, էջ 100։ Պատմիչը հանդես է գալիս որպես սրբապատկերների ջատագով։

ջանում այդ շարժումը կրոնադավանաբանական բնույթ ունեւր, այնինչ VIII դ. նա սոցիալ-քաղաքական էր և սքողվում էր պատկերամարտական շղարշով:

Լեոն III-ին հաջորդեց որդին՝ Կոստանդին V-ը (741—775), որ հաղիվ գահ բարձրացած, ստիպված եղավ երկարատև պայքար մղել իր դեմ ապստամբություն բարձրացրած Օպսիկիոն բանակաթեմի ղորավար հայազգի Արտավազդի դեմ, իր քրոջ ամուսնու ձնշելով նրա ապստամբությունը և կուրացնելով ապստամբին, Կոստանդին V-ը նախ և առաջ ուշադրություն դարձրեց արաբական վտանգին, ջանքեր թափեց օգտագործելու 747 թ. խալիֆայության սահմաններում Օմմայանների և Աբբասյանների միջև բռնկված գահակալական սուր պայքարը: Դրանից փորձեցին օգտվել նաև հայ նախարարներն ու հայ ժողովուրդը՝ թոթափելու համար արաբական լուծը¹⁴⁵: Հայ ապստամբների և Կոստանդին V-ի միջև պայմանավորվածություն կար: Հայ ապստամբները «ապաստանէին յամուրս աշխարհին Տայոց հանդերձ ընտանեօք իւրեանց և ամենայն աղխիւք. և ապաստանեալ առաւել ի զօրս արքային Յունաց որք էին ի կողմանս Պոնտոսի. քանզի էր ի մէջ սոցա ուխտ խաղաղութեան հրամանաւ կայսերն Կոստանդին»¹⁴⁶: Ահա այս ապստամբությանը ցանկացան մասնակցություն ունենալ նաև պավլիկյան աղանդավորները¹⁴⁷: Կոստանդին կայսրը գրավում է Կարինն ու Մելիտենեն, Բյուզանդիա տեղափոխում այդ քաղաքների հայ և ասորի բնակչությունը, այն հաստատում Թրակիայի Ֆիլիպպուպոլիս քաղաքում: Թեոփանեսի ասելով նրանք այնտեղ տարածեցին պավլիկյան աղանդը, վկայությունն այն բանի, որ գաղթվածների մեջ կային պավլիկյաններ և հաստատումն այն ենթադրության, որ Ֆիլիպպիկոս-Վարդան կայսեր՝ Բյուզանդիայից արտաքսած հայերը պավլիկյան աղանդավորներ էին¹⁴⁸:

Հայաստանում վիճակը ծանրացավ Աբբասյանների հարստության հաստատմամբ, որոնց ստեղծած կայսրությունը համամուսուլմանական բնույթ էր կրում: Հարկային լուծը էլ ավելի ծանրացավ, կառավարիչների կամայականություններին սահմանափակում չկար և 774 թ. բռնկվեց մի հուժկու ապստամբություն, որ ստացավ համաժողովրդական բնույթ: Եթե 747—748 թթ. ապստամբության ժամանակ Բյուզանդիան,

¹⁴⁵ Ապստամբության մասին մանրամասն տե՛ս Тер-Гевондян, Армения, стр. 88—97.

¹⁴⁶ Ղևոնդ, էջ 123:

¹⁴⁷ Бартикян, Источники, стр. 42 и сл.

¹⁴⁸ Տե՛ս վերը, էջ XXXVIII—XXXIX:

ըստ երևույթին, օգնութեան հասաւ ապստամբներին, բյուզանդական զորքերի հարձակումը արաբների վրա և հայոց հակաարաբական ելույթը նախօրոք համաձայնեցւած էր, այս դեպքում հայերը մնացին մենակ: Աշոտ Բագրատունին, Սահակ Բագրատունու որդին, նույնիսկ փորձեց կանխել ապստամբական շարժումը, պատճառաբանելով, որ Կոստանդին կայսրը «այնպէս ընթադրեալ է յահէ շարաթոյն գաղանին (իմա՛ արաբների) և «ամենևին ընդ միտ անգամ ոչ էառ ածել զմտաւ առնուլ զաշխարհս Հայոց ի ձեռաց նորա»¹⁴⁵.

Հայոց ապստամբությունը դաժանորեն ճնշվեց և ղեկավարներից շատերը ստիպված ապաստանեցին Բյուզանդիայում և ժառանգության մտան Բյուզանդական բանակում, մտադիր լինելով նրա շարքերում մարտնչել ասելի թշնամու դեմ: «Էին ոմանք ի նախարարացն Հայոց,— գրում է Ղևոնդը,— որք մերժեալ լբին զժառանգութիւնս իւրեանց և փախստեալ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»¹⁵⁰: Նրանց թվում էին Տաճատ Անձեացին¹⁵¹ և Արտավազդ Մամիկոնյանը:

Հայ ժողովրդի վիճակը հատկապես ծանրացավ Հարուն առ-Ռաշիդի օրոք (786—809), երբ էլ ավելի սաստկացավ արաբ տարրի հաստատումը Հայաստանում¹⁵², որ ավերիչ բնույթ պիտի ստանար և փաստորեն նախապատրաստեր սելջուկ թուրքերի նվաճումները։ Արաբական ցեղերը բնակեցվում էին արաբաբյուզանդական սահմանին մոտիկ, նրանք հասան մինչև Կարին քաղաքը¹⁵³։ Ստեղծված անտանելի վիճակից ելք գտնելու նպատակով հայերը ստիպված գաղթում էին. «գնացին փախստեայ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել զթիւ մարդկանն աւելի քան

149 'Անճղ, էջ 143:

150 'Անոնդ, էջ 133, նաև 143—144:

151 Նույն տեղում, էջ 158: Նա հետադառնալով անցավ արարների կողմը, նշանակվեց Հայոց իշխան (781) և իր մահկանացուն կնքեց 785 թ. Գեորգենդում, խաղարների դեմ արշավանքի զնացած ժամանակ:

152 Տե՛ս Տեր-Հակոբյան, Ամիրայություններու նույնի՝ Армения, էջ 114 և հաջ.

153 Կոստանդին V կայսրը շատ լավ էր պատկերացնում այդ արաբ տարրից բխող վտանգը և երբ 752 թ. գրավեց Կարին քաղաքը «Բնակեալսն ի նմա Սառակինոս բառ- նայր նոցին ընտանեօքն յաշխարհն Յունաց» (Ղևոնդ, էջ 129)։ Բայց դա ոչ մի զգուշ տվեց, քանզի հաջորդ տարին Եգիպտոսի խալիֆան «ածեալ արս յորդոցն իսմայելի բնակեցոյց ի նմա նոցին ընտանեօքն՝ պահել զքաղաքն և զգաւշանալ ի թշնամեաց։ Եւ կարգեաց նոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհէս Հայոց» (Ղևոնդ, էջ 130)։

ԺԲԽ արանց հանդերձ կանամբք և մանկտեալ¹⁵⁴։ Գաղթականներին առաջնորդում էին հայ նախարարները և նրանց հեծելազորը։

Կոստանդին V-ի մահից հետո իշխանությունն անցնում է նրա որդու՝ Լևոն IV-ի ձեռքը (775—780)։ Նա պատկերապաշտների հանդեպ չէր վարում այն խիստ քաղաքականությունը, ինչ իր հայրը։ Վանականների հալածանքները դադարեցին։ Պատկերապաշտներն սկսեցին հրապարակ գալ և լայն գործունեություն ծավալել Լևոն IV-ի այրի Իրենեի իշխանության օրոք, որ միաժամանակ իր անշափահաս որդու՝ Կոստանդինի խնամակալն էր։ 787 թ. նիկիայում կայացավ VII Տիեզերական ժողովը, որը դատապարտեց պատկերամարտությունը։ 797 թ. Իրենեն կուրացնելով իր որդի Կոստանդին VI-ին, դարձավ միահեծան կայսրուհի։ Սակայն երբ նա 802 թ. վճռեց ամուսնանալ ֆրանկների թագավոր Կարլոս Մեծի հետ, որն այդ միջոցով ուզում էր իր իշխանության տակ միավորել վաղեմի Հռոմեական կայսրությունը, Կոստանդինուպոլսի ավագանին կայսրուհուն գահընկեց արեց և կայսր հռչակեց պատրիկ Նիկեիոսին։ Միաժամանակ բանակաթեմային ավագանին կայսր հռչակեց հայազգի վարդանին՝ մականունը՝ «Թուրք»¹⁵⁵, Անատոլիկոն բանակաթեմի զորավարին։ Նրա ապստամբությունը սակայն ճշնվեց։

Նիկեիոս I-ը ֆինանսական խստագույն քաղաքականություն վարեց, ջանաց կարգավորել բանակի վիճակը։ Նրա միջոցառումները մեծ դժգոհություն առաջացրին վանականների ու վաշխառուների շրջանում։ Կայսրը անհաջողություններ ունեցավ նաև արաբների ու բուլղարների դեմ մղվող պատերազմներում։ 811 թ. հուլիսի 26-ին նա սպանվեց խան Կրումի դեմ տված ճակատամարտում։ Կայսր հռչակվեց Միքայել I Ռանգաբեն (811—813), որի օրոք հրապարակ ելան Նիկեիոսի կողմից հալածված եկեղեցականներն ու վանականները։ Սկսվեցին աղանդավորների և առաջին հերթին պավլիկյանների հալածանքները։ Բուլղարների դեմ մղվող պատերազմը շարունակվում էր ոչ հօգուտ կայսրության։ Նման պայմաններում բանակաթեմային դժգոհ ավագանին ստիպեց Միքայելին հրաժարվել գահից։ Բանակը կայսր հռչակեց հայազգի Լևոն V-ին (813—820), Հայաստանից Բյուզանդիա գաղթած

¹⁵⁴ Կենդ, էջ 168։

¹⁵⁵ Հենց վերջերս վարդան «Թուրքի» վերաբերյալ լույս տեսավ ընդարձակ մի հոդված։ Տե՛ս Μαυρομάτι-Κατσουγια ννοπούλου, 'Η επανάσταση του στρατηγού Βαρδάνη, σελ. 217—236.

Ֆեոդալներից մեկին, որով Բյուզանդական կայսրության պատմության մեջ սկսվում է պատկերամարտության երկրորդ շրջանը:

Վերևում առիթ ունեցանք նշելու, որ VII—VIII դդ. Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններում ստեղծվել էին հայկական բազմամարդ գաղութներ¹⁵⁶: Բյուզանդական աղբյուրներում նրանց մասին հիշատակությունները շատ սուղ են, հատկապես խնդրո առարկա ժամանակաշրջանում, հետևաբար դժվար է առավել կամ պակաս չափով հստակ պատկերացում կազմել նրանց ներքին վիճակի վերաբերյալ: Մի փոքր ուշ շրջանի աղբյուրների տվյալների հիման վրա պարզվում է, որ Թրակիայի հայկական գաղութի ազգաբնակչությունը փաստորեն շէր շփվում իրեն շրջապատող օտար տարրի հետ, հետևաբար երկար ժամանակ անաղարտ պահեց իր նիստն ու կացը, սովորույթները, մի խոսքով՝ ազգային դեմքը: Հայերը, գրում է Կոստանդին Միրանաժին կայսրը (913—959) Ադրիանուպոլսում «զգում էին ինչպես հարազատ երկրում և սեփական ժողովրդի մեջ, նրանք կարողություն կուտակեցին, անաղարտ ու մաքուր պահելով իրենց ազնվական ծագումն ու ազգային դեմքը»¹⁵⁷: Կարելի է ենթադրել, որ այդ գաղութներում հայերը զբաղվում էին նախ և առաջ առևտրով ու արհեստագործությամբ, թեև այդ բանը հաստատող ուղղակի փաստերը բացակայում են: Անուղղակի տեղեկությունները վկայում են Թրակիայի հայկական գաղութում զարգացած արհեստագործություն լինելու մասին: Հայտնի է, որ բուլղար խան Կրումը 813 թ. գրավելով Ադրիանուպոլիս քաղաքը, բռնի տարել է հայ բնակչություն, ավար է վերցրել բարձրավետ հայկական բրդյա գորգեր և կարպետներ, հանդերձներ, տնային պղնձյա սպասներ¹⁵⁸, որոնք, հարկավ, տեղի հայ արհեստավորների արտադրանքն էին:

Նշենք այստեղ, որ Թրակիայի հայկական գաղութում եղել են և անվանի հայ ճարտարապետներ, որոնք մասնակցեցին IX դ. սկզբում բուլղարական մայրաքաղաքներ Պլիսկայի և Պրեսլավայի պալատական շինարարությանը¹⁵⁹:

¹⁵⁶ Bréhier, Les Colonies; Gelzer, Pergamon (Պեղեք, հայ հասարակությունի Պերգամոն), Бартикан, О протоболгарских надписях.

¹⁵⁷ Կոստանդին Միրանաժին, էջ 35:

¹⁵⁸ Theophanes Continuatus, p. 212; Symeon Magister, p. 617.

¹⁵⁹ Якобсон, К изучению, стр. 202: ՀՃՃտ. և Бартикан, О протоболгарских надписях, стр. 75—76.

Բոլոր վերոնշյալի մասին մենք գաղափար ենք կազմում ուսումնասիրելով աղբյուրների անուղղակի տվյալները, ինչպես և ճարտարապետական հուշարձանները: Իսկ ի՞նչ են տալիս աղբյուրների ուղղակի տեղեկությունները: Աղբյուրները (մեզ հետաքրքրող շրջանի համար նախ և առաջ Թեոփանեսի «Ժամանակագրությունը») հարուստ տեղեկություններ են հաղորդում Բյուզանդիայում աչքի ընկած հայ բարձրաստիճան գործիչների վերաբերյալ, գլխավորապես ռազմական գործիչների: Ավելորդ չէ այստեղ ներկայացնել VII—VIII դդ. բյուզանդական հայազգի գործիչների մանրամասն ցուցակը, որ կազմել է Կ. Թումանովը¹⁶⁰: Հեղինակը հղում է աղբյուրների համապատասխան տեղերը: Այդ աղբյուրներից մենք նշում ենք միայն Թեոփանեսի «Ժամանակագրությունը» (թ. տառով՝ կից տալով աշխարհի արարչագործության տարեթվերը, որոնց տակ հիշված են հիշյալ անձնավորությունները): Առանձին գործիչների որևէ նախարարական տան պատկանելը (եթե այդ բանը վկայված չէ հայկական աղբյուրներում), Թումանովի (կամ այլ մասնագետների) ենթադրությունն է: Բյուզանդական աղբյուրները չեն հիշատակում հայազգի գործիչների նախարարական որ տան պատկանելը:

Մավրիկիոս-Փոկասի ժամանակաշրջանում (582—610)

Ատատ Խորխոռունի, պատրիկ, զորավար Թրակիայում

Հերակլիոս Ավագ, զորավար, պատրիկ, Աֆրիկայի էքսարքոս (թ. 6078, 6079, 6080, 6100, 6101)

Սահակ Մամիկոնյան, զորավար Թրակիայում

Մուշեղ Բ Մամիկոնյան, զորահրամանատար Թրակիայում

Թեոդոսիոս Խորխոռունի, զորավար Հայաստանում

Հերակլիոս I-ի ժամանակաշրջանում (610—641)

Վահան զորավար (թ. 6118, 6125, 6126)

Դավիթ Սահառունի, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա

Սահակ Կամսարական (°), Իտալիայի էքսարքոս

Մանուել Արշակունի, մագիստրոս, Եգիպտոսի փոխարքա (թ. 6126)

Մթեժ Բ Գնունի, զորավար (թ. 6118)

¹⁶⁰ Toumanoff, Caucasia. p. 149—151.

Նիկեոսա պատրիարք, Հերակլիոս Ավագի զարմիկը

Թեոդորոս զորավար (թ. 6125)

Թեոդորոս մագիստրոս

Վահան Խորխոռունի, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա

Վարազտիրոց Բ Բագրատունի, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա

Կոստանդին III (Կոստաս II) — Հուստինիանոս II-ի ժամանակաշրջանում (641—711)

Վահան Յոթղեյան, Չորրորդ Հայքի կառավարիչ (թ. 6194)

Վարդան-Ֆիլիպպիկոս, զորահրամանատար, կայսր (թ. 6203, 6204, 6205)

Վարազ-Բակուր, պրոտոսպաթար, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (թ. 6203)

Հովհաննես Գնունի (669 թ. հռչակվեց կայսր)

ՄԺԵԺ Գ Գնունի, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (668—669 թթ. հռչակվեց կայսր, թ. 6160)

Պասազնաթես Պարսկաձին, պատրիկ, Արմենիականների բանակաթեմի զորավար (տե՛ս ծանոթ. 332)

Սմբատ Ե Բագրատունի, սպաթարոկանդիդատ, դրոնգար, զորահրամանատար Թրակիայում

Թեոդորոս զորավար

Թեոդորոս Միակես (Հմայակ), պատրիկ (թ. 6196, 6205)

Վալենտին Արշակունի, պատրիկ, էքսկուբիտորների կոմես (թ. 6136)

Լևոն III-Կոստանդին V-ի ժամանակաշրջանում (717—775)

Արտավազդ Մամիկոնյան, Արմենիականների բանակաթեմի զորավար, կուրապաղատ, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (742—743 թթ. հռչակվեց կայսր, թ. 6209, 6218, 6232, 6235)

Արտավազդ, դոմեստիկոս (թ. 6235)

Վարդան, պատրիկ, Արմենիականների բանակաթեմի զորավար (հաջորդի՝ Կոստանդինի հայրը)

Կոստանդին, սպաթար, պրոտոստրատոր (նախորդի՝ Վարդանի որդին, թ. 6263, 6257)

Նիկեփոր Մամիկոնյան, զորահրամանատար Թրակիայում (Արտավազդ Մամիկոնյանի կայսերակիցը, Թ. 6233)

Նիկետաս Մամիկոնյան, Անատոլիկոն բանակաթեմի զորավար, մոնոստրատեզոս (Թ. 6234, 6235)

Տրդատ Մամիկոնյան, պատրիկ (Թ. 6234)

Լևոն IV-Իրենեի ժամանակաշրջանում (775—802)

Ալեքսիոս Մուսելես (Մուշեղ) Մամիկոնյան, սպաթար, վիգլայի ղրունգար, պատրիկ, Արմենիականների բանակաթեմի զորավար (կայսր Հռչակվեց 792 թ., Թ. 6283, 6284, 6285)

Արտավազդ Մամիկոնյան, Անատոլիկոն բանակաթեմի զորավար (Թ. 6270)

Վարդան, պատրիկ, Թրակեսիոն բանակաթեմի զորավար (Թ. 6291)

Վարդան, պատրիկ, սխուրի զոմեստիկոս (Թ. 6288)

Վարդ, Արմենիականների բանակաթեմի զորավար (Թ. 6273)

Վարդ պատրիկ (Թ. 6284)

Վարազաիրոց Բագրատունի (°), Արմենիականների բանակաթեմի զորավար (Թ. 6270)

Կոստանդին Արտաշիր, պրոտոսպաթար (Թ. 6285)

Գրիգոր Մուսալակի որդի Մամիկոնյան, պատրիկ, Օպսիկիոն բանակաթեմի զորավար (Թ. 6270, 6295)

Տանատ Անձևացի, Բուկեղարների բանակաթեմի զորավար (Թ. 6270, 6274)

Նիկեփոր I—Ստավրակիոսի ժամանակաշրջանում (802—811)

Արշավիր Կամսարական (°), քվեստոր, պատրիկ (Թ. 6300)

Վարդան «Թուրք», պատրիկ, Անատոլիկոն, Օպսիկիոն, Թրակեսիոն, Բուկեղարների բանակաթեմերի զորավար (6295, 6296)

Վարդան Անեմաս, սպաթար (Թ. 6299)

Միֆայել I-ի ժամանակաշրջանում (811—813)

Լևոն Գնունի, Անատոլիկոն բանակաթեմի զորավար, պատրիկ (Թ. 6304, 6305), ապագա Լևոն V կայսրը (813—820)

* * *

Սույն աշխատությունը պատրաստ էր, երբ հնարավոր եղավ ծանոթանալու անգլիացի բյուզանդագետ Կ. Մանգոյի «Ո՞վ է գրել Թեոփանեսի ժամանակագրությունը» խորագիրը կրող հոդվածին¹⁶¹ Կ. Մանգոն, նշանակություն շտալով ձեռագիր ավանդության, Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի, Կոստանդին Միրանածինի, Հովհաննես Սկիրիցեսի վկայություններին, գտնում է, որ Թեոփանեսը չէր կարող «ժամանակագրության» հեղինակը լինել, որ նա պարզապես ձևի է բերել Գեորգ Սինկելլոսի պատրաստի «դոսիեն»։ Անգլիացի պատմաբանն աշխատում է իր միտքը հիմնավորել այն հանգամանքով, որ Գեորգ Սինկելլոսի մահվան և Թեոփանեսի կողմից «ժամանակագրության» շարադրման միջև քիչ ժամանակ էր մնում, որ Թեոփանեսը շատ զարգացած մարդ չէր, այն էլ վատառողջ, որ Թեոփանեսի «վարքում» «ժամանակագրության» որպես նրա հեղինակության մասին խոսք չկա։ Կ. Մանգոն ենթադրում է, որ Գեորգ Սինկելլոսը մինչև նիկեոս I կայսեր (անգամ Միքայել I) պատմության վերաբերյալ նյութն արդեն հավաքած էր։ Նա մատնացույց է անում «ժամանակագրության» մի շարք տեղեր, որոնք, իր կարծիքով, չեն հաստատում երկի՝ Թեոփանեսին պատկանելու հանգամանքը, այլ, ավելի հավանական է, Գեորգ Սինկելլոսին։

Հենց վերջերս սովետական բյուզանդագետ Ի. Ս. Ջիշուրովը¹⁶² մեկ առ մեկ քննության ենթարկելով Կ. Մանգոյի փաստարկները, ցույց տվեց, որ դրանք կոնտեքստից անջատ անջատ են վերցված, որ հիշյալ տեսությունն անհամոզեցուցիչ է։

* * *

Ստորև տալիս ենք Թեոփանես խոստովանողի «ժամանակագրության» ամբողջական թարգմանությունը՝ սկսած Փոկասի (602—610) թագավորության սկզբից։ Նախորդող մասը զանց ենք առել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրա շարադրման համար Թեոփանեսի օգտագործած աղբյուրները պահպանվել են։ Նրանք հետագայում կկազմեն սույն մատենաշարի առանձին հատորները (մեկը՝ Պրոկոպիոս Կեսարացին արդեն կազմել է «Բյուզանդական աղբյուրների» առաջին գիրքը)։ Թարգմանությունը կատարված է Թեոփանեսի «ժա-

¹⁶¹ Mango, Who wrote the Chronicle of Theophanes, p. 9--17.

¹⁶² Чучуров, Феофан Исповедник—публикатор, редактор, автор?

մանակագրության» Կարողոս դե Բոորի աշխատասիրած հունարեն քրնական բնագրից¹⁶³։ Փակագծերում տրվում է աշխարհի արարչագործության թվականը, (anno mundi), որ մեր պատմիչը դրել է իր ժամանակագրական սխեմեմի հիմքում (տե՛ս վերը, էջ XII)։ Ասենք այստեղ, որ Թեոփանեսի բնագրում թվական տվյալները արտահայտված են և՛ բառերով, և՛ «թվերով» (հունարեն այբուբենով)։

¹⁶³ *Theophanis Chronographia*, recensuit *Carolus de Boor*, volumen I, Textum graecum continens, Lipsiae, 1883, p. 290—503.